



# ԿՈՒՏՈՒԶՈՎ




ՌՈՒՍ ՄԵՑ ԶՈՐԱԿԱՐԻ ԿՅԱՆՔԻ ՈՒ  
ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՈՒՐԱԳԻԾԸ

355գ  
P-89

ՊԵՏՂՐԱՏ

39



MAR 2010

3557

F-89

mf

Ս. ԲՈՐԻՍՈՎ

# ԿՈՒՏՈՒԶՈՎ

ԱՄԵՐԿ ՈՌԻՍ ՄԵԾ ՉՈՐԱՎԱՐԻ ԿՅԱՆՔԻՄԵՎ  
ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1989

3557  
F-89

06 MAR 2013

40.570

Ս. Բորիսով.— Ակնարկ ուսս մեծ գորավար Մ. Ի. Կուտուզովի կյանքի ու գործունեյության մասին:


Այս բրոշյուրը գրված է խորհրդային ընթերցողների լայն շրջանների համար:

Մի շարք պատմական հետաքրքիր վաստերի միջոցով ընթերցողը կձանոթանա ուսս մեծ զորավար Կուտուզովի անձնավորության, կյանքի և գործունեյության հետ, Կուտուզովի, վորի անվան հետ սերտորեն կապված է 1812 թվի ժողովրդական պատերազմը, վոր մղում էր Ռուսաստանը Նապոլեոնի զորքերի հարձակումից աղատելու համար:

С. БОРИСОВ  
КУТУЗОВ

Очерк жизни и деятельности  
великого русского полководца

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.



2388  
39



Նոր գլխավոր հրամանատար Մելիսայիլ Իլլարիոնովիչ  
Կուտուզովը, վորին ուրախ զիմավորում եյին զինվորնե-  
րը, հասարակ կառքով զնում եր ուսական բանակները,  
վորոնք Փրանսիացիների առաջ նահանջում եյին զեպի  
Ֆարևո-Չայմիչչ: Բոլորում եր Կուտուզովի վախժունյո-  
թերորդ տարին: Նա կարճահասակ եր, զառամած, ծան-  
րամարմին, ուռած դեմքին անվնաս եր մնացել միայն մեկ  
աչքը, բայց վողով արի յեր ու մաքով կայտառ:

Դեպի Ռուսաստան արշավանքն սկսելուց առաջ Նապո-  
լեոնը բանակին տրված հրամանում գրում եր.

«Յեկել ե Ռուսաստանի որհասը, նրա բախտը պետք ե  
վճովի»...

Արդյոք Նապոլեոնը կարո՞ղ եր այն ժամանակ նա-  
խատեսել, վոր Ռուսաստանի բախտը կլինի Կուտուզովի  
ձեռքում:

Յերբ Կուտուզովը նշանակում ստանալով մեկնում եր  
բանակ, նրա քրոջ վորդին հարցրեց.

— Քեռի, մի՞թե դուք մտածում եք ջարդել Նապոլեո-  
նին:

— Չարդե՞լ. վո՛չ, բայց խաբել—այո, հույս ունեմ,  
— պատասխանեց Կուտուզովը:

Բայց Կուտուզովը վո՛չ միայն խաբեց, այլ և այնպի-  
սի հարված հասցրեց Նապոլեոնին, վոր վերջինս կործան-  
վեց:

Մելիսայիլ Իլլարիոնովիչ Գուլենիչչև-Կուտուզովը ծնե-  
վել ե 1745 թվին: Նա զինվորական ընտանիքից եր: 14  
տարեկան հասակում ավարտելով հրետանային և ինժեներ-  
ական կորպուսի դասընթացը, Կուտուզովը զինվորական

ծառայութիւնն սկսեց իբրև հրետանու կապրալ (կրտսեր յենթասպա)։ Յերեք տարուց հետո նա դարձավ կապիտան և վաչտի հրամանատար։ Հրաշալի դիտենալով լեզուներ (Փրանսերեն և դերմաներեն), Կուսուղովը կարող եր առաջադիմել զիմանադիտական աստարիզում, բայց նա այդ ճանապարհով չզնայ։ Գտնելով Ռեյելում, Կուսուղովն ոգտվեց այն հանգստանքից, վոր Յեկատերինա II-ը ժամանել եր այնտեղ, և նրան խնդրեց իրեն վորպես կամավոր ընդունել այն գորքերի մեջ, վորոնք Լեհաստանում կուվում էյին կոնֆեդերատոնների դեմ։ Կուսուղովի խնդրքը բավարարվեց և նրան նշանակեցին մի փոքրիկ ջոկատի հրամանատար։ Այսպես սկսվեց Կուսուղովի մարտական ծառայութիւնը։

Ռուսաստանը նվաճողական պատերազմներ եր մղում։ Ռուսական բանակը, վոր ստեղծել եր Պետրոս I-ը և վորը Պոլտավայի մոտ տարած հաղթանակով համաշխարհային հռչակ եր ձեռք բերել, Յեկատերինա II-ի սկսած ուսաթուրքական առաջին պատերազմի ժամանակ անբավարար դրութեան մեջ եր։ «Բանակը, — գրում եր Ս. Վորոնցովը, — կրճատված եր, չեր կոմսյեկտավորված և ցրված եր ամբողջ կայսրութեան մեջ։ Հարկավոր եր լինում դաժան ձմեռվա կեսին ստիպել նրան, վոր անցնի թուրքական սահմանը, և թնդանոթները, մորտիրները, արկերն ու ուժերը Պետերբուրգի զինասպահետից փոստով ուղարկել Կիև»։ XVIII դարի յերկրորդ կեսում ուսական բանակի զարդն ու նրա հզորութեան և ուժի աճման աղբյուրն էյին հանդիսանում ուսական նշանավոր զորավարները, վորոնց մեջ, բանակի վերածնման գործում, առաջին տեղը պատկանում է Ռուսյանցեին և Սուվորովին։

Ռուսական ապագա մեծ զորավար Կուսուղովը բախտի բերմամբ նրանց յերկուսի հետ ել չիում ունեցավ։

1770 թվին յերկտասարդ սպա Կուսուղովը ժամանեց Ռուսյանցեի բանակը, վոր կուվում եր թուրքիայի դեմ։ Լինելով մի քիչ ծանրամարմին, թեև դեռ քսանհինգ տարեկան եր, Կուսուղովն ունեւր աշխույժ և ուրախ բնավորութիւն։ Մի անգամ, սպայական քեֆի ժամանակ, Կու-

սուղովը պատկերեց զորահրամանատարի կոմիքական գծերը։ Ինչ-վոր մեկը, ցանկանալով հաճոյանալ, Ռուսյանցեին դեկուցեց Կուսուղովի չարածճիւղեթյան մասին։ Ռուսյանցեւր չհանդուրժեց իր հեղինակութեան այդպիսի, ինչպես նրան թվում եր, նսեմացումը յերկտասարդ սպայի կողմից։ Նա Կուսուղովին անհապաղ Դանուբյան բանակից փոխադրեց Ղրիմի բանակը։ Այդ մի ծանր դաս հանդիսացավ Կուսուղովի համար։ Այդ ժամանակվանից նա սկսեց զսպել իր սրամտութեան պոթիկումները, իր աշխույժութեան ու շիվոզ բնավորութիւնը։

Ղրիմի բանակն ավելի քիչ ակտիվութեամբ եր գործում, քան Դանուբյանը, վորովհետև կուվում եր յերկրորդական ուղղութեամբ։ Այս պատճառով, լինելով Ղրիմյան բանակում, Կուսուղովը բավականաչափ ժամանակ ունեւր իր ռազմական դիտելիքները լրացնելու համար։ Իսկ յերբ առիթ յեղավ, նա անմիջապես ցուցաբերեց նաև իր քաջութիւնը։ Շումլու գյուղի մոտ (Ղրիմում, Ալուշտայի մերձակայքում) տեղի ունեցած կուվի ժամանակ Կուսուղովը, դրոշակը ձեռքին, զինվորների առաջն ընկած նետվեց հակառակորդի վրա և նրան դուրս քշեց գյուղից։ Հենց այդ ժամանակ, նահանջող թշնամուն հետապնդելիս Կուսուղովը դնդակով ծանր վիրավորվեց ձախ քունքից․ դնդակը դուրս յեկավ աջ աչքի մոտից։ Իժիշկներն անհուսալի համարեցին Կուսուղովի դրութիւնը, բայց նա կենդանի մնաց, թեև իր ամբողջ կյանքում մի աչքից զուրկ։

Կուսուղովի կենսագրութեան մեջ, վոր հրատարակվեց 1813 թվին, մատնանշված եր. — «Շումլույի մոտ զրիմցիների պարտութիւնից հետո Կուսուղովը, չնայած այդ դեպքի ժամանակ իր ցուցաբերած անձնական քաջութեանը, իր տարած հաղթանակի կարևորութեանը, իր ստացած վերքին... մնաց առանց վորևե պարգևի»։ Յերկար բուժվելուց և արտասահմանում ճանապարհորդելուց հետո, վորտեղ Կուսուղովը ծանոթացավ Արևմտյան Յեվրոպայի ականավոր զորավարների հետ, նրան վիճակվեց շտաբից փոխադրվել զորաշարք, այնտեղից ելի շտաբ, մինչև վոր նոր պատերազմ սկսվեց թուրքիայի հետ։

Այս պատերազմի ժամանակ Կուսուղովը ծառայում էր Սուվորովի հրամանատարութեան տակ: Այստեղ նրանք մոտիկից ճանաչեցին իրար, և Սուվորովը բարձր էր գնահատում Կուսուղովի մարտական հասկութունները:

Հռչակված առաջնորդի՝ բանակ ժամանելը հսկայական տպավորութիւն թողեց Կուսուղովի վրա: 1790 թվի դեկտեմբերի 2-ի առավոտյան Իզմայիլի մոտ գտնված դիրքերին մոտեցան ճանապարհին կեղտոտված յերկու ձիավորներ, վորոնք հարյուր վերստ ճանապարհ էին անցել: Այդ Սուվորովն էր և մի կաղակ: Կաղակի փոքրիկ կապոցումն էր գտնվում հրամանատարի ամբողջ գույքը: Սուվորովի պարզութիւնը, զինվորին մատչելի և հասկանալի լինելու նրա կարողութիւնը Կուսուղովին ստիպեցին նոր հայացքով նայել հրամանատարի պարտականութեան և վարքի վրա: Վոչ թե սուվորովյան հռչակավոր տարրերնակութիւնները, վոչ թե անսահման խիզախութիւնը վաթսուս տարեկան զորավարի, վորը, կարծես մահն արհամարհելով, լինում էր գնդակների ու կարտեչի՝) տակ, — այլ Սուվորովի հայացքը պատերազմի, վորպես բարձր արվեստի մասին, նրա առանձնահատուկ կարողութիւնը — մոտենալ զինվորներին, հարդել և դաստիարակել նրանց վորպես մարտիկներին, — ահա թե ինչը խորապես տպավորվեց Կուսուղովի մեջ և ահա թե ինչ ստացավ նա Սուվորովից:

Սակայն պատերազմ մղելու յեղանակներն նկատմամբ Կուսուղովն ընթանում էր իր ուղիով: Սուվորովն ասում էր, թե «պատերազմ մղելիս կարևոր է վոչ թե զորքի քանակը, այլ հմտութիւնը», — այդ ընդունում և իրականացնում էր Կուսուղովը: Կուսուղովը չէր կիրառում Սուվորովի մյուս պատվիրանը, թե ճակատամարտում հարկավոր է «արագութիւն և զրոհ»: Իր հետագա ամբողջ մարտական կյանքում նա ուրիշ տակտիկա յեր գործադրում: Գրանով էլ արտահայտվում էր խառնվածքների և բնավորութիւնների տարբերութիւնը: Գեներալ Մանսկին, վոր

1) Կարտեչ — մանր շնդակներով Լցված սուժը:

անկեղծորեն հարգում էր Կուսուղովին ու գնահատում նրա մեծահոգութիւնը և բարեսրտութիւնը, իր հուշերում պատմում է. — «Կուսուղովն իր բարեսրտութեամբ շատ նման էր այն ասիացուն, վորը շատրվանի կարկաչիւնով հմայված՝ մոռանում է ամբողջ աշխարհը... Նրա համար մեծ մասամբ հարկավոր էր լինում ամեն ինչ պատրաստել և մշակել, բայց այստեղ ևս պետք էր հարմար ըստ գտնել, վոր նա լսեր և վորեւե թուղթ ստորագրեր: Այնքան նա ծանրաշարժ էր սովորական դեպքերում գործերը լսելու և իր անունը ստորագրելու համար»:

Յեթե Կուսուղովն անտարբեր էր վերաբերվում ստորադրյալների զեկուցումները լսելուն, ապա արշավանքում, մարտում այլ էր նրա վարքը: Լինելով խառն գորակետ՝ Կուսուղովը կարողանում էր զորքերի առաջ քրեալ կաղակական փոքրիկ ձի նստած, հին սերթուկով, առանց ուսաղիւրների, հասարակ գլխարկով, նազայկած ուսին, և զինվորների հետ միասին կրել արշավանքի բոլոր զգվարութիւնները:

Նա կարողանում էր իր հետեից գնդեր տածել զրոհի:

Այդպես յեղավ Իզմայիլում:

Գրոհի նախորդակին Սուվորովը շրջեց բեկակները և զինվորներին ասաց.

— Տեսնո՞ւմ եք այս բերդը: Նրա պարիսպները բարձր են, խրամատները՝ խորունկ, բայց և այնպես, մենք պետք է դրավենք այն:

Հարձակումից առաջ զորամասերում կարդացվեց հետևյալ հրամանը.

«Ռուսական բանակը յերկու անգամ պաշարել է Իզմայիլը և յերկու անգամն էլ նահանջել. մեզ մնում է յերրորդ անգամ կամ հաղթել, կամ մեռնել փառքով»:

Կովի նախորդակին Սուվորովը զրոհի պլանն ուղարկեց Կուսուղովին, վորը 6-րդ կորպուսի հրամանատարն էր. շանթթանայու և դիտողութիւններ անելու համար: Պրանք բերող գնդապետ Շիրային Կուսուղովը հարցրեց.

— Իսկ դուք զիտե՞ք, վոր Սուվորովին խաբել են ուսում:

— Յես չեմ հասկանում, այդ ի՞նչ է նշանակում:

— Մի՞թե դուք չեք տեսնում, վոր խտաբացին ուզում է խլել Սուվորովի վառքը: Յես շատ եմ ցափում դրա համար...

Կուտուզովը խտաբացի յեր անվանում գեներալ Դերիբասին, վորը ծառայում էր ռուսական բանակում: Իմանալով Իզմայիլը գրավելու հրամանի մասին՝ Դերիբասը վորոշել էր անձամբ կատարել այդ գործողությունը, վորպեսզի փառքի հասնի: Նա Սուվորովից զորքեր էր խնդրել գրոհի նախապատրաստման գործողություններ կատարելու համար, խսկ ինքը հրետանին վերցրել էր նավերից, նավերը բեռնել զորքերով, վորպեսզի ուղարկի Իզմայիլը գրավելու... Այդ դիտավորությունը Կուտուզովի աչքից չէր վրիպել և նա դնդապետ Շիրյայի միջոցով այդ մասին գեկուցեց Սուվորովին:

Սուվորովը գնաց Դերիբասի զորքերի գլխավորը և համոզվեց, վոր Կուտուզովի հաղորդած լուրը ճիշտ է:

Հետագայում Սուվորովը, յերբ իր ներկայությունը հիշում էյին Կուտուզովին, ասում էր.

— Նա խելացի յե, շատ խելացի... Նրան ինքը, Դերիբասն էլ չի կարող խաբել:

Սկսվեց գրոհը: Զորքերը կամացուկ մոտեցան բերդի շուրջը փորված խորը խրամատին. ճեղաններ էյին դցում, սանդուղքներն իրար էյին կապում և դնում թմբին, գետնի մեջ էյին ցցում սվինները և բարձրանում թմբի վրա: Կուտուզովը գնում էր իր զորասյան առջևից: Թուրքերը թնդանոթային և հրացանային կրակ բացին՝ համառորեն գնդակոծելով ռուսների զորասյուները: Առաջին հարձակումից հետո Կուտուզովը նահանջեց: Հենց այդ ժամանակ Սուվորովի կողմից նրա մոտ յեկավ մի սպա և զորահրամանատարի անունից չնորհավորեց նրա նոր կոչումը՝ Իզմայիլի պարետի կոչումը:

Դրոհը վերսկսվեց:

Բայրոնը «Դոն-ժուան» պոեմում հնչուն տուներով պատկերել այդ ճակատամարտը.

Շուրջը տիրում էր ահավոր խախար:  
Թնդանոթների կրակն էր միայն  
Աղեղ դծելով ահեղ ու սրայծառ  
Յոլում Դանուբի ջրերի մեջ լայն,

Ինչպես հայելում մի դժոխային:  
Հրաձգությունը չէր առնում դադար,  
Յերկնի կրակից յերկրինը դաժան,  
Թե դուր ինչ մեղում, մյուսն անդուր է, չար:

Յերկիր ու յերկինք, բերդ, լեռ ու ավիք  
Հուր դժոխք դարձան մի ակնթարթում,  
Ինչպես հրավառ հրաբուխ դավիք,  
Ինչպես մի Նոնա, վոր հուր է ժայթքում:

Հրացանները հորիզոնադիր բռնած, յերաժշտություն նվազի տակ ռուսները վերսկսեցին դրոհը և շարժվում էյին դեպի քաղաքի կենտրոնը, — աջ կողմից Պոտյոմկինը, հյուսիսից՝ կազակները, ձախից՝ Կուտուզովը: Սկսվեց արյունոտ ձեռնամարտը: Փողոցները լիքն են բերդի պաշտպաններով. բոլոր հրապարակներում թուրքական ուժեղ ջոկատներ կան. տներից հրացանային կատաղի կրակ է թափվում: Թուրքերը դիմադրում էյին հազվադյուր քաջությամբ: Յուրաքանչյուր տուն, կովով էր գրավվում: Տները բոցերի մեջ էյին և վառվող կտուրները թափվում էյին կավոզների վրա: Վառվող ախոռներից դուրս թռած հաղարավոր ձիերը սարսափահար փախչում էյին փողոցներով, ավերացնելով խառնաչիթությունը:

Բերդի ներսում դաժան կռիվը տևեց վեց ժամ: Առանձնապես շատ արյուն թափվեց Խոտինյան դարբասի մոտ գտնվող ամրացված տունը գրավելու համար: Հաստ, քարաչեն սլատերի հետևում դիրք էյին բռնել 2000 թուրքեր. իրենց հրետանու կրակով նրանք սաստիկ կոտորած էյին առաջացնում հարձակվողների շարքերում: Կուտու-



զովը հրաման եր ստացել գրավել այդ ամրացված շենքը, և նա գրավեց:

Ռուսները կորցրին մոտ 10.000 մարդ, թուրքերը կորցրին ավելի քան 20.000 մարդ—միայն սպանվածներ:

Իզմայիլը գրավելուց հետո Կուսուզովը Սուլտրովին հարցրեց.

— Ինչո՞ւ դուք բարեհաճեցիք շնորհավորել ինձ Իզմայիլի պարեա նշանակելը և Իզմայիլը գրավելու մասին թաղուհուն լուր ուղարկեցիք այն ժամանակ, յերբ յես նահանջեցի բերդից:

Սուլտրովը խորամանկարար քմծիծաղ տվեց.

— Յես ճանաչում եմ Կուսուզովին, իսկ Կուսուզովն էլ ինձ է ճանաչում: Յես գիտեմ, վոր Կուսուզովը կլինի Իզմայիլում: Իսկ յեթե մենք չգրավեյինք Իզմայիլը, Սուլտրովը կմեռներ նրա պատերի տակ, Կուսուզովը նույնպես...

Իզմայիլը գրավելու մասին տված զեկուցադրում Սուլտրովը հիշեցնում էր.— «Գեներալ Կուսուզովը գտնվում էր մեր ձախ թևում, բայց նա իմ աջ ձեռքն էր»:

Յեկատերինա II-ը Սուլտրովի զեկուցադրի հիման վրա Կուսուզովին դրեց, վոր Կուսուզովը ցուցաբերել է «գերազանց քաջություն Իզմայիլ քաղաքը և բերդը գրավելիս, վորի ժամանակ դուք... ցույց տվիք արվեստի ու անվեհերության նոր փորձեր, թշնամու ուժեղ կրակի տակ հաղթահարելով բոլոր դժվարությունները, բարձրացաք թումբը, տիրացաք բառախոնին, և յերբ գերազանց թշնամին ձեզ սախպեց կանգ առնել, դուք, քաջության որինակ ծառայելով, դիրքը պահեցիք ձեր ձեռքում, հաղթեցիք ուժեղ թշնամուն, ամրացաք բերդում և շարունակեցիք հարվածել թշնամիներին»:

\*\*\*

Կուսուզովի զինվորական տաղանդը զարգացավ գեա Յեկատերինա II-ի թագավորության տարիներին:

Յեկատերինա II-ը էր թագավորության տարիների

ընթացքում ուսական բանակը մի քանի անգամ ուղարկեց նվաճողական պատերազմներ մղելու: Ժողովրդի համար խորթ և ատելի էյին այն նպատակները, վորոնց համար Յեկատերինա II-ը պատերազմներ էր մղում: Անընդհատ պատերազմները կլանում էյին դանձարանի բոլոր յեկամուսները: Յուրաքանչյուր միլիոնն ուղղակի արյունով էր քամվում յերկրից,— ավելի հաճախ էյին բռնկվում գյուղացիական ապստամբությունները Ֆեոդալ-ազնվականական անլուր ճնշման դեմ: Պուղաչևի գյուղացիական հեղափոխությունը ցնցեց Ռուսաստանը: Յեկատերինա II-ը դաժան կերպով ճնշում էր գյուղացիական ապստամբությունները:

Յեկատերինա II-ից հետո, 1796 թվին դահ բարձրացավ Պավել I-ը: Նա վերակազմեց բանակը:

Ինչպիսի՞ տեսք ունեւ Պավելի վերակազմած և բարեփոխած ուսական բանակը:

Վորոտում էյին թմբուկները: Կսվում էր հրամանը.

— Հավասարվել հյուսով:

Ձինվորների շարքն անշարժանում էր: Տարբերակ տեսարան էյին ներկայացնում այդ ուս գյուղացիները: Երանք հազնում էյին կանաչ համազգեստներ յերկար վեշերով, վորոնք հեա էյին ծալված և աստառված էյին կարմիր կամ սպիտակ կտորով,— նայած ոճիքի կամ թեվածալի դույնին: Պարանոցներին—նեղ փողկապներ, գլուխներին—յեռանկյունաձև գլխարկներ, մազերը չչաբած, հյուսերով և յերկար ծամով», սպիտակ անդրավարտիկներ ու վոսներին—կիսակոշիկներ: Սուսերակալը և ուսափոկը սպիտակ էյին, փամփշտասպարկերը՝ սև, լաքած կաշուց, ուսերին՝ հորթի կաշուց կարված մազախներ սպիտակ կաշվե փոկերով... Ձինվորների ձեռներին կային ծանր հրացաններ՝ լայն սվինով, իսկ յեթառայաների ձեռներին՝ յերկու սաժենանոց զեղարզներ...

Մեեն ինչ սլրուսական ձևով էր:

Այդ սպերային զգեստավորումն անթիվ ու անհամար տանջանքներ էր պատճառում զինվորին: Պահակատեսից և շարքային «եկզբըցիցիաներից» (վարժություններից) ա-

զատ ժամանակ, առավոտից մինչև յերեկո զինվորները մաքրում էյին հանդերձանքը և սպիտակացնում անդրավարտիկները: Սուսնապես տանջալից եր սանրվածքը:

Սուվորովը, լավ ուսումնասիրելով ռազմական գործի պատմութիւնը («տակտիկան առանց պատմութեան մթութիւնն է» — ասում էր նա), ստեղծեց իր «Հաղթանակելու շիտութիւնը»: Զորքերի ուսուցման մասին նա ունեւր կայուն հայացք:

— Խաղաղ ժամանակ պետք է սովորեցնել միայն այն, ինչ վոր պետք է անել պատերազմի ժամանակ, — ասում էր Սուվորովը:

Պավելի ռեֆորմը բանակը դարձրեց բյուրոկրատական մեքենա. զորամասերի պետերը զրկված էյին ամեն մի ինքնուրույնութիւնից:

Բանակի կենտրոնացումն անհեթեթութեան էր հասցըրած. կայսրը կատարում էր բոլոր նշանակումները, մինչև իսկ կրասեր սպաների տեղափոխութիւնը մի վաշտից մյուսը, տալիս էր արձակուրդներ և ամուսնանալու թույլտվութիւն:

Այն, ինչ վոր Սուվորովը և Կուտուզովն առանձնապես կարևոր էյին համարում, — առանձին հրամանատարներին նախաձեռնութեան և պատասխանատվութեան իրավունք տալը — Պավելի ռեֆորմը խտտորեն դատապարտում էր: Հետեանքը շուտով յերևաց. հրամանատարական կազմը դեմադրկվեց, կրտսերները միայն մի հոգս ունէյին — սիրաշահել ավագներին: Ամբողջ ուշադրութիւնը դարձվում էր մանր բաների, ցուցական կողմի վրա: Զորքերի մարտական պատրաստութիւնն անցավ հետին պլանի վրա:

Պավելի ռեֆորմը զորքերի շարային պատրաստութիւնը տաժանքի վերածեց: Զինվորական պատմարան Բայովը գրում էր. — «Շուտով զորքերը սկսեցին իրենց պատրաստութեան դադարել համարել այն, վոր զորատեսի ժամանակ սխալ չդնեն վրտները, վոր ճակատի դիժը չծովէ, վոր ճշտութեամբ պահպանվեն միջանցներն ու հեռավորութիւնները, վոր զորամասի ընդհանուր տեսքը ցերեմոնիալ յերթով անցնելիս վայրուն լինի... Ուսուցման գըը-

խավոր նպատակն էր դառնում կանոնադրութիւններով նախատեսված ձևերի ճիշտ վերարտադրումը մինչև ամենաչին մանրամասնութիւնները և մեխանիկական շարժումը՝ պահպանելով ամենախիստ հավասարութիւն, հեռավորութիւններ ու միջանցներ: Այսպիսով աստիճանաբար տիրեց հանդիսակարգային և հերթական զորատեսի համար տեղի ունեցող ուսուցումը, ընդվորում հենց թագավորի համարութեամբ դաժան պատիժ էր տրվում կանոնադրութեան տառից ամենաչին շեղում կատարելու համար: Այսպիսի պայմաններում զինվարութիւնը խլում է ամբողջ ժամանակը, իսկ վոչ մեծ ջոկատների եվոլյուցիաներն ու մանյովները, ունենալով բազմազան բովանդակութիւն, ուսանելի լինելով զորքերի և ստորին պետերի համար, իրենց տեղը զիջում են հարթ, միապաղաղ վայրում մեծ ջոկատների դժային վարժութիւններին, վորոնք հանդում են մեխանիկական վարժեցման պրիոմներին... Բանակում զարգանում էյին կոպտութիւնները և անհատի ստորացումը: Դաժանացավ ավագների վարմունքը կրտսերների, մանավանդ զինվորների հետ: Տույժերի նշանակումը չէր կանոնավորվում վոչ մի որեւորով»:

Բանակում տիրող այդ կարգերը խտտորեն քննադատելու համար Սուվորովն աչքից ընկավ:

Կուտուզովը վարվեց այլ կերպ, խորամանկութեամբ: Նա հասկանում էր, վոր Սուվորովը ճանաչված ժողովրդական հերոս է, վորի փառքը չէյին կարող մթաղնել թաղակիր խեղկատակի քայլադրոյութիւնները: Իսկ ինքը, Կուտուզովը, վոր չունեւր բարձր հոչակ, հարստութիւն, չէր պատկանում ականավոր տոհմի, — չէր կարող բացահայտ կերպով արտահայտել իր դժգոհութիւնը: Պավելի հետ խորամանկութեամբ և դիպլոմատիկորեն վարվելով, Կուտուզովը կարողացավ պահպանել նրա բարեհաճութիւնը, բայց իր գործողութիւններով հավատարիմ էր մնում իր համոզմունքներին:

Դեպի զինվորն իր վերաբերմունքով Կուտուզովը խիստ տարբերվում էր պետերի մեծամասնութիւնից: Դրանով արտահայտվում էյին թե՛ Սուվորովի հայացքները զինվո-

քի նկատմամբ և թե՛ հենց իրեն՝ Կուսուղոյի այն դի-  
տակցութիւնը, վոր կուլի, ճակատամարտի, պատերազմի  
բախտը վորոշում է վոչ այլ վոք, քան զինվորը: Առողջ  
դատողութիւնը Կուսուղոյին թելադրում էր, թե անհրա-  
ժեշտ է հողատար վերաբերվել դեպի զինվորը: Յե՛վ Կու-  
սուղոյը միշտ հետևում էր այդ առողջ դատողութեանը:  
Արշավանքների ժամանակ նա իրեն դանազան զրկանքների  
յէր յենթարկում, վորպէսզի զինվորներն ավելի տոկուն  
լինեն և ավելի հեշտ հողթահարեն յերթերի դժվարու-  
թիւնները: Կուսուղոյը սպաներին թույլ չէր տալիս ծե-  
ծել զինվորներին, հետևում էր, վորպէսզի զինվորներին  
լավ կերակրեն և չգողանան նրանց սննդի համար բաց  
թողնվող դրամը: Կուսուղոյը չէր քաշվում զինվորների  
հետ ճաշելուց: Հողատարութիւն ցույց տալով դեպի հի-  
վանդները, Կուսուղոյը յերբեմն անձնական փողերով ոգ-  
նում էր կարիքավոր զինվորներին: Այն դատան ժամանակ-  
վա համար զինվորի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը  
հանդիսանում էր մեծադուլն մարդասիրութիւն, և այս  
պատճառով Կուսուղոյը միշտ կարող էր հույս դնել զին-  
վորների նվիրվածութեան վրա: Նա շատ թանգ էր դնա-  
հատում զինվորների վերաբերմունքը դեպի իրեն:

Կուսուղոյը յերբեմն իրեն թույլ էր տալիս կանգնեց-  
նել ծանոթ հին զինվորին և քսակից փող հանելով, ասել.

— Ընկերներիդ հետ կխմես ծերունուս կենացը...

Այն ժամանակ բանակում հաճախ եյին առաջավոր  
պատերում կանգնած զինվորներին պատժում սուտ տազ-  
նադի համար:

Կուսուղոյը յերբեք չէր պատժում սխալվող զին-  
վորներին, այլ ընդհակառակը, սիրտ էր տալիս նրանց:

— Ավելի լավ է լինել չափից դուրս զգուշ, — ասում  
էր նա, — քան թե անփույթ և ապա խարված:

Կուսուղոյը չէր սիրում արշավանքների ժամանակ զր-  
բատեսեր կազմակերպել, դիտենալով, թե ինչպես այդ  
հոգնեցնում է զինվորներին: Նրա ժամանակակիցներից  
մեկը պատմում է, վոր մի անգամ ինչ-վոր դեներալի  
գումակը բռնել էր ճանապարհը և գնդերը պետք է շեղվե-

յին այդ ճանապարհից: Իմանալով այդ մասին, Կուսուղ-  
ոյը դուժաւիկն հրամայեց անցնել մի կողմ, աղատել տե-  
ղը և ճանապարհ տալ զորասյանը:

— Արշավանքի ժամանակ յուրաքանչյուր քայլը թանգ  
է զինվորի համար, շուտ տեղ հասնի, ավելի շատ կհան-  
գըստանա, — ասում էր Կուսուղոյը:

238  
37



II

1805 թվին, յերբ Ֆրանսիայի հետ պատերազմ սկսվեց, Կուսուղովը նշանակվեց ռուսական այն բանակի գլխավոր հրամանատար, վորն ուղարկված էր Ավստրիային ոգնելու:

Ռուսական բանակն արշավանքի դուրս յեկավ 1805 թվի ոգոստոսին, Ռաճիվիլովի մոտ կենտրոնանալուց հետո: Բանակը գնում էր վեց զորասյուներով: Ռուսական բանակն Ավստրիա յեր գնում Տեչենի, Բրյուննի, Կրեմսի վրայով դեպի Բրաունաու, վոր գտնվում էր Ինն գետի վրա: Արշավանքի սկիզբը հանգիստ էր անցնում: Բայց սեպտեմբերի 10-ին, յերբ լուր տարածվեց, թե Նապոլեոնը մոտենում է միջին Հռենոսին, Կուսուղովին հրամայվեց արագացնել յերթը:

Կոալիցիայի ուժերը, վորոնք 1805 թվին դուրս յեկան Նապոլեոնի կես միլիոնանոց բանակի դեմ, բաղկացած էին ավստրիական բանակից՝ 375.000 հոգի, և ռուսական բանակից՝ 50.000 հոգի:

Կուսուղովին շտապեցնում էին... Նրա զորքերը գնում էին արագ, որական անցնելով 45-60 վերստ, մասամբ վտոտվ, մասամբ էլ սայլերով: Աշնանային անձրևները փչացրել էին ճանապարհները, արշավանքը տեղի յեր ունենում չափազանց ծանր պայմաններում: Բանակը ճանապարհին թողեց 6000 հիվանդ...

Շտապ յերթն իզուր անցավ:

Նապոլեոնը, վարպետությամբ մանյովը կատարելով, մոլորեցրեց ավստրիական բանակի հրամանատար Մակկին: Մակկը, վոր չցանկացավ իր ժամանակին նահանջել և միանալ Կուսուղովի հետ, խարվեց Նապոլեոնի կողմից:

չրջապատվեց Ուլմի մոտ և հոկտեմբերի 8-ին անձնատուր յեղավ ամբողջ բանակով: Ավստրիացիները մոտ լիակատար լքում և շիտթուլթյուն էր տիրում: Նոյեմբերի 10-ին Կուսուղովն իր բանակը կենտրոնացրեց Բրաունաույի մոտ, Ուլմից 240 վերստի վրա: Կուսուղովի բանակը հոգնած էր, զինվորները կոշիկներ չունեյին, աշնանային վատ յեղանակը և ավստրիացիներին՝ խայտառակ կերպով անձնատուր լինելը ճնշող ազդեցություն էին թողնում... Սպասվում էին ճակատամարտեր Նապոլեոնի բազմաքանակ բանակի հետ:

Դաշնակից-ավստրիացիները վախկոտ հրամանատարության շնորհիվ ընկնելով այդպիսի ծանր դրության մեջ՝ ռուսական բանակի գլխավոր հրամանատար Կուսուղովը չվհատվեց: Նրա բացարձակ հանգստությունն ու ջանասարտությունը բարերար ազդեցություն էին թողնում իրեն շրջապատող հրամանատարների և զինվորների վրա: Կուսուղովը, վորին հատուկ էր հավատը դեպի իր ընդունակությունները և ռուսական բանակի զինվորներին տոկունությունն ու դիմացկունությունը, գործում էր վստահորեն, բայց զգուշ: Նա իրեն հաշիվ էր տալիս, վոր իր դեմ գտնվում է վոչ այլ վոք, քան Նապոլեոնը, վորի 150 հազարանոց բանակը յերեք-չորս օրվա ճանապարհի վրա յե: Չընկճվել, ավանտյուրայի հետեից չընկնել, անձնատուր չլինել, այլ պատվով փրկել իրեն վստահած փոքր բանակը, — ահա թե ինչ վորոչեց Կուսուղովը:

Նապոլեոնը հետախուղության և լրտեսների միջոցով իմացավ, վոր Կուսուղովը Բրաունաույի մոտ կանգնած է մենակ, արանց շուտափույթ ոգնություն ստանալու հույսի, քանի վոր դաշնակիցների ռեզերվները հեռու էին Բուկուրյեվից բանակը գտնվում էր Տրոպայույի մոտ, Բեննինգսենի բանակը — Վարշավայի մոտ:

Կուսուղովը սկսեց նահանջել, մանյովրներ կատարել, չընկնել Նապոլեոնի ձեռքը: Կուսուղովի վեց զորասյուներեց մեկի հրամանատարը, Կուսուղովի բարեկամը, արտասովոր քաջություն ունեցող Բագրատիոնը պաշտպանում էր բանակը: Նրա վերջապահ զորքը հետ էր մղում

Մյուրատի հեծելազորի անընդհատ հարձակումները: Հոկտեմբերի 24-ին Ամշտետների մոտ Մյուրատը հասավ ուսներին: Բազրատիոնը թեպետ կռվի բռնվեց, բայց ստիպված էր նահանջել: Բազրատիոնին ոգնելու համար Կուտուզովն ուղարկեց Մելրադովիչի ջոկատը, վորի զբեմադերները սվիններով դիմավորեցին Ուզինոյի զբեմադերների գրոհը: Դաժան ճակատամարտից հետո Ֆրանսիացիները ջարդվեցին: Այդ ժամանակ Կուտուզովն իր գլխավոր ուժերը տարավ և ազատեց հարվածից: Հոկտեմբերի 28-ին Մաուտերենի մոտ նա Դանուբը անցավ և սպա կամուրջները վոնչնացրեց:

Նապոլեոնը վորոչեց խուսափող Կուտուզովին սեղմել Դանուբին և վոնչնացնել: Մորտյեյի կորպուսն ուղարկվեց, վորպեսզի թույլ չտա, վոր Կուտուզովն անցնի Դանուբի ձախ ափը: Կուտուզովը հասկացավ Նապոլեոնի մտադրությունները և վարպետութամբ մանյովր կատարելով, խանդարեց այդ ստրատեգիական կոմբինացիան, հենց Նապոլեոնին դնելով դժվար դրության մեջ: Մորտյեյի կորպուսն ընկավ Կուտուզովի հարվածի տակ: Նապոլեոնը դադարեցրեց հարձակումը: Մորտյեն, վորն իմացավ, թե Կուտուզովն անցել է դետը, չփոխեց ուղղությունը և շարունակեց ընթանալ Կուտուզովին մոտենալու համար: Նապոլեոնի այս սխալը չվրիպեց Կուտուզովի փորձված աչքից: Կուտուզովը վորոչեց ոգտվել դրանից, գրոհել և ջարդել Մորտյեյի կորպուսը, նրան միացած Գալանի զինվորային հետ միասին:

Ճակատամարտը տեղի ունեցավ Կրեմսի մոտ, 1805 թվի հոկտեմբերի 30-ին:

Կրեմսի մերձակա վայրն իրենից ներկայացնում է մի կիրճ՝ Դանուբի և Բոհեմյան լեռների ճյուղավորությունների միջև, վորոնք շատ տեղերում այնքան են մոտենում գետին, վոր դեպի Կրեմս տանող ճանապարհը դառնում է ժայռերի միջով անցող նեղ արահետ: Այնտեղ, ուր լեռները հեռանում են գետից, ձգվում են խաղողի այգիներով ծածկված հարթ տարածությունները:

Կուտուզովը Մորտյեյին դեց հենց այդ թակարգի մեջ:

Ռազմական պատմարանի նկարագրութամբ ճակատամարտի ֆինալն այսպես էր. — «Ջորքերը կռվում էին գլխավորապես ձեռնամարտի բռնվելով. ավանի փողոցներում սվիններով խոցում, հրացանի կոթերով խփում էին իրար: Մորտյեյին հաջողվեց անցնել Դյուրբենշտեյնը. անձամբ նա և իր զորքերի մի մասը վրկվեցին նրանով. վոր նավակներով անցան Դանուբը, մնացածները նահանջեցին գետի հոսանքով դեպի վեր: Գալանի զինվորի կորցրեց իր կազմի մինչև յերկու յերրորդ մասը և այնքան քայքայվեց, վոր կամպանիայի շարունակության ընթացքում այլևս կռվի չէր ուղարկվում»:

Նապոլեոնը հոկտեմբերի 30-ը անվանեց «կոտորածի օր»: Նա հազվադեպ դեպքերում էր այդպես կատաղած լինում — առաջին անգամն էր նա հանդիպում մի զորավարի, վորը կռվի դաշտը թողնում էր վոչ թե նրա հարկադրանքով, այլ իր սեփական կամքով:

Կրեմսում հաղթանակ տանելուց հետո Կուտուզովը վորոչեց, վերջապես, իր զորքերին հանդիստ տալ, վորին արժանի էյին նրանք: Սակայն ավտորիական պետերի նոր հիմարությունը վիժեցրեց ուսական բանակին այնքան անհրաժեշտ հանդիստը:

Վիեննայի մոտ Դանուբի կամուրջը, վորով Նապոլեոնի բանակը կարող էր անցնել ձախ ափը, ականված էր և պահպանվում էր 13000 հոգուց բաղկացած ավտորիական մի ջոկատով: Մյուրատն սպիտակ թաշկինակ բռնած, ձիով մոտեցավ այդ կամուրջին: Պարլամենտյոր ձեռնարով, Մյուրատը կանչեց ավտորիական զորքերի պետին, դինադադարի մատին բանակցելու համար: Այդ բանակցությունների ժամանակ Ֆրանսիացիք ծածուկ մոտեցան կամուրջին, անցան այնտեղից ու հետ մղեցին խաբված ավտորիացիներին: Վիեննայի ճանապարհը բացված էր:

Նապոլեոնին խանդարում էր միայն Կուտուզովի բանակը: Նապոլեոնը վորոչեց շրջապատել և վոնչնացնել այն: Նա Մյուրատին հրամայեց իր հեծելազորով, Սուլտի

և Լաննի կորպուսներով և Ուզինոյի գերնադերներով, Վիեննան գրավելուց հետո, կտրել Կուսուզովի ճանապարհը, իսկ Բերնադոտի և Մորայեյի կորպուսներին հրամայեց անցնել Կուսուզովի թիկունքը:

Իմանալով կամուրջի մոտ տեղի ունեցած զեպքերի մասին, ճիշտ արժեքավորելով ստեղծված դրուժյան ամբողջ լրջությունը, Կուսուզովը դիչերով Կրեմսից դուրս յեկավ դեպի Բրյունն, Բուկուզեդենին միանալու համար: Տեսնելով, վոր Կուսուզովը դարձյալ ազատվում է իր ձեռքից, Նապոլեոնն իր ամենալավ զենեքալներին ուղարկեց նրան հետապնդելու:

Ավստրիայում դաշնակիցների ուժերը ջլատված էին: Կուսուզովը հասկանում էր, վոր Նապոլեոնի դեմ մզվող պայքարի հաջողությունը կախված է դաշնակիցների բոլոր ուժերը նրա դեմ կենտրոնացնելուց: Դեռ այն ժամանակ, յերբ Նապոլեոնը չէր գրավել Վիեննան, Կուսուզովն իր վրա համարձակություն վերցրեց ավստրիական կայսր Ֆրանցին նամակով առաջարկելու հետևյալը. — «Վիեննան հանձնել Փրանսիացիներին, գործել առանց շտապելու. սկզբում պաշտպանել Յմո դետն անցնելու տեղերը, հետո անցնել Դանուբի ձախ ափը. թշնամուն չթողնելով առաջ անցնել, միացնել դաշնակից բանակի բոլոր անջատ դորամասերը և հավաքելով ուժերը, նոր կամպանիա սկսել»:

Ֆրանսիացիք շուտով Վիեննայից արտաքսեցին ավստրիացիներին, վորոնք չլսեցին ուսս զորավարի այս խորհուրդը:

Նապոլեոնը Մյուլրատի քառասուն հազարանոց ջոկատին հանձնարարեց հետապնդել Կուսուզովի բանակը, վոր գնում էր դեպի Բրյունն:

Հարկավոր էր դիմադրել Մյուլրատին և բանակն ազատել հարվածից: Կուսուզովն այս խնդիրը հանձնարարեց իր բարեկամ Բադրատիոնին: Նա կանչեց Բադրատիոնին և հրամայեց 8000 ղեկավորներից բաղկացած ջոկատով, ինչ կերպ էլ լինի, կանգնեցնել Մյուլրատին, յեթե դրա համար հարկավոր լիներ նույնիսկ զոհել ամբողջ ջոկատը, մինչև վերջին ղեկավորը:

Բադրատիոնը յերգվեց Կուսուզովին.

— Կղիմանամ: Ձե՛մ գլխի:

Կուսուզովը հրաժեշտ տվեց նրան, վորպես մի մարգալ, վորը մահվան է դնտապարտված:

Բադրատիոնի ջոկատը, որվա ընթացքում ճանապարհ անցնելուց հետո չհանդատանալով, ամբողջ դիչերը գնում էր անձրևի տակ, հեղեղված ճանապարհներով և ջրով լցված ձորակներով: Նոյեմբերի 3-ի առավոտյան նա գտնվում էր Գոլլաբրուննի մոտ: Մյուլրատը, վոր վստահ չէր իր սեփական ուժերի վրա և չգիտեր ուսսների թիվը, վորոչեց սպասել Մուլտի մոտենալուն: Հարկավոր էր ժամանակ շահել և խաբել ուսսական հրամանատարությանը: Գործի դրվեց արդեն մի անգամ հաջողված մեթոդը. Մյուլրատը պարլամենտյոր ուղարկեց Բադրատիոնի մոտ՝ գինադադարի վերաբերյալ առաջարկով: Յերբ Կուսուզովը կարդաց Բադրատիոնի ղեկուցադիրն այդ մասին, մի լավ ծիծաղեց և զենեքալ Վինցենզերովին ուղարկեց Մյուլրատի մոտ: Բանակցությունների հետևանքով գինադադարի նախագիծը ստորագրվեց և ուղարկվեց Կուսուզովին ու Նապոլեոնին: Կուսուզովը պատասխանը դիտմամբ ուշացրեց 20 ժամով, վորի ընթացքում ուսսական բանակը, մինչև ծնկները ցեխի մեջ թաղվելով, հասավ Պրոգորլեց: Այստեղ նա ազատ էր իր թիկունքից կտրվելու վտանգից:

Իմանալով Մյուլրատի և Կուսուզովի բանակցությունների մասին, Նապոլեոնը կատաղեց և կտրական հրաման տվեց անհապաղ դրոհել ուսսների վրա:

Բայց արդեն ուշ էր: Մյուլրատի առաջ գտնվում էր միայն Բադրատիոնի վերջապահը (արյերգարդը), — Կուսուզովի բանակը բարեհաջող կերպով խուսափել էր հարվածից:

Յերբ Մյուլրատը սկսեց դրոհը, Բադրատիոնն իր ջոկատով դիրքեր գրավեց Շենդրաբեն գյուղից դեպի Հյուսիս: Շենդրաբենի ճակատամարտը սկսվեց նոյեմբերի 4-ին, ցերեկվա ժամը 5-ին, և վերջացավ յերեկոյան ժամը 11-ին: Յուլրաքանչյուր ուսս ղեկավորի դեմ կռվում էր Հինգ Փրանսիացի: Մյուլրատը հաղթանակ չտարավ: Բադ-

րատիոնի հերոսական ջոկատը, փրկելով բանակը, ծանր ճակատամարտ մղեց, կորցրեց իր կազմի մեկ յերրորդ մասը և կատարելով իր խնդիրը, միանգամայն կանոնա-վոր կերպով նահանջեց դիշերային խավարում:

Ռուսական բանակը շարունակում էր ընթանալ դեպի Ուլմյուլց: Միշտ հանդիստ Կուտուզովը փտահորեն ու վարպետութեամբ հետ էր մղում այն մահացու հարվածները, վոր Նապոլեոնն ուղղում էր ռուսական բանակի դեմ:

Աշնանային անձրևոտ մի դիշեր, յերբ բանակը կանդ էր առել մի փոքր հանգստանալու, Կուտուզովը խարույկի մոտ տաքանալով խորհրդակցեց յերիտասարդ սպաների հետ:

Սպաները դանդաղվում էյին, թե ճանձրացել են նահանջելուց. նրանք վառ ցանկութեամբ ունեյին կովել թրչնամու դեմ:

Նայելով խարույկի բոցով լուսավորված յերիտասարդական դեմքերին, Կուտուզովը պատասխանեց.

— Դուք ասում եք, վոր կովել եք ուղում, վոր արդեն ժամանակ է կովելու... Իսկ ինչի՞ համար: Այդ մասին չեք մտածել: Մի՞թե դուք կասկածում եք, վոր պետք չդիտես և վաղորդ չի մտածել, թե յերբ և ինչ պետք և անել: Մեր ժամանակ կուրորեն հնազանդվում էյին պետերին: Մենք չեյինք հարցնում, թե ինչի համար և մեզ արվում այս կամ այն հրամանը, այլ միայն աշխատում էյինք կատարել այդ հրամանը: Պետերին անպայման հնազանդվելը զինվորական ծառայութեան վուդին է: Իսկական քաջը նա չէ, ով կամայականորեն նետվում է դեպի վտանգը, այլ նա յե, ով հնազանդվում է:

Յերթի ժամանակ մի ինչ—վոր իշխան, վորն անհամբերութեամբ ուղում էր աչքի ընկնել կովում, Կուտուզովի զգուշութեամբ վախկոտութեամբ անվանեց:

Գլխավոր հրամանատարն իմացավ այդ մասին: Նա իշխանին կանչեց իր մոտ:

— Յերիտասարդ, իմ վերքերը ցույց են տալիս, վոր

յես վախկոտ չեմ. սպիտակ մազերս չեն քայքայել իմ ուժերը: Հետևանքները կարդարացնեն ինձ:

Կուտուզովի բանակը հասավ Ուլմյուլց: Հետապնդվելով բազմաքանակ թշնամու կողմից, պարզելով ու վիժեցնելով Նապոլեոնի ստրատեգիական խելահեղ դիտավորութեանները, բանակը ցուրտ և անձրևային աշնանը կարճ ժամանակամիջոցում անցավ չորս հարյուր վերստ հեղեղված ճանապարհներ, և համարյա ամբողջովին պահպանեց իր ուժերը: Յերբ ուսները մասն Ուլմյուլց, դաշնակից բանակի թիվը հասավ 86.000—ի: Նապոլեոնը, վոր հասել էր Բրյունն (Ուլմյուլցից 70 վերստի վրա), ուներ 90.000 հուլուց բաղկացած մի բանակ:

Յերկու կողմերի զորքերն ևլ հանդատանում էյին:

Պալատական բազմաթիվ սպասափորներով Ուլմյուլց ժամանեցին ռուսական կայսր Ալեքսանդրը և ավստրիական կայսր Ֆրանցը: Սկսվեցին ինտրիգները, բամբասանքները, պալատական վոջնչութեանների և կարյերիստների իրարանցումը: Կուտուզովին արդեն չեյին լուծ, բանակի հրամանատարութեանը փաստորեն դուրս յեկավ նրա ձեռքից և ընկավ բթամիտ վեյրոտերի ձեռքը, վոր վայելում էր Ալեքսանդրի կույր փտահութեանը:

Հրավիրվեց ռազմական խորհուրդ, վորտեղ մեծամասնութեանն արտահայտվեց հոգուտ հարձակման: Միայն Կուտուզովն էր դրա դեմ: Նա հայտարարեց, վոր դես վաղ է Նապոլեոնին հարվածել, և պնդեց, վոր պետք է նահանջել:

Կուտուզովին հարցրին.

— Հապա դուք վորտե՞ղ եք հակահարված տալու Նապոլեոնին:

— Վորտեղ վոր միանամ Բեննինգսենի և պրուսացիների հետ: Վորքան հեռու քաչենք Նապոլեոնին, այնքան նա թույլ կլինի, վորովհետև կհեռանա իր սեղերվներից, և այնտեղ, Գալիցիայի խորքերում յես կլարդեմ Ֆրանսիացիներին վտակոնները, — պատասխանեց Կուտուզովը:

Կուտուզովին վոչ վոք չպաշտպանեց: Նրա պլանը, վոր

քը, ինչպես ցույց տվեց պատմութունը, միակ խերացի պլանն էր, — մերժվեց:

Ալեքսանդրը չէր սիրում Կուտուզովին: Նախանձոտ ու բռնաբարձիկ ուսակա կայսրը յենթարկվեց ավստրիացիներէ շողջորթութեանը: Ավստրիացիք Փրանցի գլխավորութեամբ Ալեքսանդրին դրողում էյին շուտ վերջացնել պատերազմը: Նրանք ուզում էյին ուս գինսլորներէ արյունով քաղել ավստրիական բանակի խայտառակ գործողութունները: Կուտուզովն այդ լավ էր հասկանում, բայց անգոր էր ազդելու Ալեքսանդրի վրա և համոզելու նրան, վոր Նապոլեոնի վրա հարձակվելը վտանգավոր է ուսական բանակի համար: Կուտուզովի թշնամիներն այդ ժամանակ լայն չափով ոգտագործեցին Ալեքսանդրի հանրահայտնի թշնամութունը դեպի Կուտուզովը:

Շտարում փոփոսում էյին, բամբասում և լուր էյին տարածում, թէ իբր Կուտուզովը խելքը թոցրել է, թէ իբր նա խելագարվել է ուսիրագներէ (նահանջներէ):

Կուտուզովը զիջեց: Իր համառութունը շարունակել նա չէր կարող, գիտակցելով, վոր դրա համար նրան կարող են ուղղակի արտաքուսել բանակէ:

Ալեքսանդրը հարձակման հրաման տվեց:

Նապոլեոնը լավ էր զգում իր դրութեան ամբողջ վտանգավորութունը: Նրա բանակը Փրանսիայից հեռու յեր գտնվում: Պատերազմը նրան վճռական հաղթանակ չբերեց ուսներէ դեմ, և հիմա, յեթէ դաշնակիցներն ոժանգակ գորքեր ստանային, նրա դրութունը կգտնար կրիտիկական: Նա մտածում էր հաշտութեան մասին: Յե՛վ հանկարծ նրան փրկում են: Յերկու կայսրներէ հիմարութունը Փրանսիական բանակն ազատում է կրիտիկական դրութունէ:

Հարձակման նախորդակին Կուտուզովի գլխավոր շտաբում, Կրթնավիցիում ռազմական խորհուրդ հրավիրվեց:

Վեյրոտերը սեղանի վրա բացեց Աուստրիացի շրջակայքի մեծ քարտեզը և ինքնազուստութեամբ, հանդիսավոր կերպով սկսեց կարգալ յերկար, ճանճարալի և խառնաչփոթ դիսպոզիցիան:

Կուտուզովը սկզբում լսում էր, հետո, հարմար տեղավորելով իր չաղ մարմինը, քաղցր քնեց...

Վեյրոտերը շարունակում էր կարգալ: Ռուս գեներալները ջանք էյին թափում զսպելու իրենց հորանջը: Նրանք մոռնեց չէին հասկանում Վեյրոտերի կարգացածից:

Ընթերցման վերջում Կուտուզովն արթնացավ: Այդ ժամանակ գեներալներից մեկը Վեյրոտերին հարցրեց.

— Ի՞նչ անել, յեթէ Նապոլեոնը հարձակման անցնի:

Վեյրոտերը բթամտութեամբ պատասխանեց.

— Այդպիսի դեպք չի նախատեսվում:

Առափոսյան ժամը մոտ յերեքն էր: Կուտուզովը բաց թողեց գեներալներին, և յենթազնդապետ Տոլը սկսեց թարգմանել դիսպոզիցիան: Թարգմանութունն ավարտվեց առափոսյան ժամը Տ-ին, յերբ գնդերն արդեն արշավում էյին:

Այդ արշավանքի մասնակից սպա Բուտովսկին 50 տարուց հետո հրապարակեց իր հիշատակարանը: Ահա թէ նա ինչ է պատմում այն տպավորութեան մասին, վոր թողել էր հարձակման հրամանը. — «Կարելի չէ պատկերացնել, թէ վորքան ուրախացալ Նապոլեոնը, տեսնելով, վոր դաշնակից բանակը վճռականապես անցնում է հարձակողական գործողութեան. Նապոլեոնը չափազանց վախենում էր Կուտուզովի պաշտպանողական սխտեմից, և ո՛վ գիտե, թէ նա ինչպիսի միջոցներ էր դործադրել, վորպեսզի չհետևեն Կուտուզովի խորհրդին... Արդեն այն որից, յերբ Կուտուզովն ու Բադրատիոնը միացան, Նապոլեոնը մեր վրա չէր հարձակվում իրեն համար սովորական արագութեամբ, իսկ յերբ մենք դրավեցինք Ոյլմյուսկի բարձրութունը, նա բոլորովին սուս արավ և այնպես էր ցույց տալիս, թէ մտադիր է պաշտպանողական դիրք բռնել. նրա կողմից գործադրվեցին բոլոր խորամանկութունները, վորպեսզի մենք կռվի դուրս գանք, և ավստրիական գեներալները, վորոնց նա ջարդել էր մի քանի անգամ, կարծես նվաճողին դոհացնելու համար ջանասիրութեամբ նետվում էյին դեպի առաջ, նրա դեմ: Դեհ, գերմանացի-



ներին ել հենց այն եր հարկավոր, վոր ուրիշէ ձեռներով կրակից շագանակներ հանեյին...»:

Բանակը շարժվեց դեպի Վիշաու:

Առանց նախապես տեղեկութիւններ հավաքելու հա-  
ղափարողի ուժի և դասավորութեան մասին, Վեյրոտերը  
վորոշեց գլխավոր հարվածն ուղղել Նապոլեոնի աջ թևի  
վրա և փոխանակ ուղղակի ընթանալու դեպի նշված նպա-  
տակը, թեւային շարժում ձեռնարկեց: Յերեք որ դնում եր  
բանակը միջոյցի ճանապարհներով, անտանիլի ցեխի  
միջով, համարյա Փրանսիացիների աչքի առաջ: Նապոլեո-  
նը հասկացավ Վեյրոտերի դիտավորութիւնները և համա-  
պատասխան միջոցներ ձեռք առավ: Կողմերը պետք և  
իրար հանդիպեյին Աուստերլիցի մերձակա դաշտում, բլրա-  
շատ բաց տարածութեան վրա, վոր յեզերված եր մի քանի  
վտակներով և չրջակայքի վրա իշխող Պրացենյան բար-  
ձունքներով, վոր դրավել եր Կուտուզովը, իսկույն ըմ-  
բռնելով այդ կետի կարևորութիւնը:

Նոյեմբերի 20-ին, արեւածագին, Նապոլեոնը մարշալ-  
ներով ու շտաբով շրջապատված դիտում եր, թե ինչպես  
մշուշը ցրվում և Պրացենյան բարձունքներից և ինչպես  
ուսաների զորասլաններն իջնում են դեպի Գոլդբախ:

Միայն Կուտուզովն եր դանդաղեցնում բարձրութիւն-  
ներից հեռանալը: Ալեքսանդրն իր շքախմբով մոտենալով  
նրան, շատ զարմացավ դրա վրա և Կուտուզովին ստիպեց  
արագացնել հարձակումը:

Աուստերլիցի ճակատամարտը սկսվեց:

Կուտուզովը գտնվում եր հենց կովի կենտրոնում:  
Յերեք Նապոլեոնը ուստական զորքերի կենտրոնը Պրացենի  
բարձունքներից հետ մղեց և Փրանսիացիները զորասլա-  
ններն սկսեցին ավելի ուժեղ հարձակվել, ուստական զոր-  
քերը տեղի տվին: Կուտուզովը հոնքից զնդակով վերա-  
վորված, արյունաշաղախ դեմքով բարձրաձայն գոչեց զին-  
վորներին.

— Վո՛չ մի քայլ դեպի հետ, կանգնե՛լ մահվան դեմ:

Առջևից տանելով դրոշակը, գրեհադերները քաջա-  
բար գրոհ ավին: Բայց ուսաների խելահեղ քաջութեան ա-

ւանձին եպիդոլները չեյին կարող կանխել պարտութիւնը  
և հաղթանակը խլել Նապոլեոնից, վորն ոգտագործեց իր  
հակառակորդի զորքերի ցրվածութիւնը և նրա ընտրած  
դիրքի անհարմարութիւնը:

Յերեք պարզվեց, վոր Աուստերլիցի ճակատամարտը  
տանուլ և տրված, Ալեքսանդրը կատողեց և փախավ կովի  
դաշտից:

Հրաման տրվեց նահանջել:

Գնահատելով Աուստերլիցի ճակատամարտը, Նապո-  
լեոնն ասաց.

— Աուստերլիցի մոտ ուսաներն ավելի մեծ քաջու-  
թիւն ցույց ավին, քան իմ դեմ մղած մյուս ճակատա-  
մարտերում:

Չորքերը կանգնել էյին հանգստանալու: Ձինվորները  
տաքանում էյին խարույկների մոտ: Կուտուզովը մոտեցավ  
մի խարույկի: Ձիավարը նրան նստարան մատուցեց: Կու-  
տուզովը նստեց ու յերկար նայում եր բոցկլտող վոստե-  
րին: Աչքերը հառելով հավաքված սպաներին, նա կամա-  
ցուկ ասաց.

— Պարոններ, դուք յերիտասարդ եք, դեռ ժամանակ  
կունենաք վրեժ առնելու Փրանսիացիներից, իսկ յես ծեր  
եմ և աստված դիտե, թե արդոք առիթ կունենա՞մ նրանց  
դեմ կովելու, իսկ Աուստերլիցի պարտութեան համար յես  
անմեղ անդովս նախատինք եմ կրելու...

Կուտուզովը լռեց: Նրա դեմքը մոռայլ եր և նա կրակի  
վրա տաքացնում եր ծերունական ստուած ձեռները: Յե-  
կավ սուրհանդակը և զեկուցեց, վոր թշնամին մոտենում  
է: Կուտուզովը հրամայեց իրեն համար ձի բերել: Մեկը  
նրա աչքերում արցունքներ նկատեց: Աուստերլիցի ճակա-  
տամարտում Կուտուզովը կորցրել եր իր ազդակներն:

Շքախմբից մի սպա նրան ասաց.

— Մենք յերբեք ձեզ չենք տեսել այդքան տխուր: Յե-  
րեկ, յերբ ձեզ հաղորդեցին դժբախտութեան մասին, դուք  
նույնիսկ ուշադրութիւն չդարձրիք:

Կուսուցումը պատասխանեց .

— Յերեկ յես պետ եյի, իսկ այսօր—հայր :

Կուսուցումն իր ծանր մարմինը նետեց թամբի վրա և զնայ առաջավոր զորամասերի ղերքերը :

III

Խայտառակված և կատաղած Ալեքսանդրն Առևտերը ցի պարտութեան ամբողջ մեղքը զցեց Կուսուցումի վրա :

— Ամեն ինչում մեղավոր ե Կուսուցումը, վորովհետև նա բավականաչափ յեռանդուն կերպով չըլիմադրեց հարձակման սլանին :

Կուսուցումը հեռացվեց բանակից : Զինվորներն ու սպաները, վորոնք այնքա՛ն շատ արչավանքներ եյին դորձել Կուսուցումի հետ, ցավում եյին, վոր իրենց զրկել են իելացի և հողատար զորավարից : Նույնիսկ պաշտոնական պատմաբանները, սրանք ել դրում եյին Ալեքսանդրի կամայականութեան մասին, ասելով, վոր «Կուսուցումի անձնավորութիւնը կարծես մշտական կշտամբանք և հիշեցում եր Ալեքսանդր կայսրին տեղի ունեցած կատաստրոֆի մասին, և այս պատճառով նա սիրտեմատիկորեն խուսափում եր Կուսուցումին վորեւե աչքի ընկնող հանձնարարութիւն տալուց» :

Առևտերը չեոտ ոռուական բանակն է՛լ ավելի դաժան պարտութիւն կրեց Փրիդլանդի մոտ : Գեներալ Բեննինգսենը, վորի ընդունակութեանը հավատում եր Ալեքսանդրը, բանակը դասավորեց նեղ ձորահովիտում, Ալլույի ձախ ամբին :

Իմանալով այդ մասին, Նապոլեոնը բացականչեց .

— Ամեն որ չես բռնի թշնամու այդպիսի սխալը :

Փրիդլանդի մոտ յեղած պարտութիւնը զարհուրելի տպավորութիւն թողեց Ալեքսանդրի վրա : Այդ մի նոր Առևտերից եր Ռուսաստանի դռների առաջ : Ալեքսանդրը Նապոլեոնից հաշտութիւն խնդրեց, վորը և ստորագրվեց Տիլզիտում : Ռուսական կայսրը վորոչեց մի նոր պատե-

ըպագով բարձրացնել իր վարկը: 1809 թվի դարնանը նա ուսուսական բանակն ուղարկեց Թուրքիայի դեմ:

Դանուբի ափերում Թուրքերի դեմ յեղած ուսուսական բանակի շարքերում կար մինչև 80.000 հոգի: Մոտավորապես այդքան էլին նաև Թուրքերը: Ռուսական բանակի հրամանատարը Պրոգորովսկին էր: Բանակում նշանակվել էր նաև Կուսուսկոմի իբրև կորպուսի հրամանատար: Կուսուսկոմի ժամանեց թե չէ, նրա կորպուսն ուղարկվեց Բրախլովյան բերդը գրոհելու: Գրոհը չհաջողվեց, ուսուսները տանուլ տվին ճակատամարտը: Պատենելի փոսերը լըցվեցին մի քանի հազար դիակներով: Մերոնի Պրոգորովսկին փետում էր իր մաղերը և հեկեկում: Նրան մխիթարում էր մյուս ծերունին—Կուսուսկոմի:

— Ինձ հետ դրանից ավելի մեծ փորձանքներ են պատահել,— ասում էր նա,— յես տանուլ տվի Աուստերլիցի ճակատամարտը, վորը վճուեց Յեվրոպայի բախտը, բայց չեյի լալիս:

Ոգոստոսին Պրոգորովսկին մեռավ և դիսավոր հրամանատար նշանակվեց Բադրատիոնը, վորին շուտով փոխարինեց Կամենսկին: Իսկ յերբ Կամենսկին հիվանդացավ, նրա տեղ նշանակվեց Կուսուսկոմի:

Արդեն 1811 թիվն էր: Թուրքիայի դեմ մղվող պատերազմի վերջը չէր յերեւում, մինչդեռ Յեվրոպայում Նապոլեոնի վարքը ցույց էր տալիս, վոր անխուսափելի յէ նոր պատերազմը Ռուսաստանի և Յրանսիայի միջև: Ռուսական կառավարության համար անհրաժեշտ էր հարավում աղատել իր ձեռները, վերջացնել Թուրքիայի դեմ մղվող պատերազմը, վորը ձգձգվում էր: Այդ կարող էր անել հեղինակութուն և տաղանդ ունեցող մի խոշոր զորավետ: Այն ժամանակ այդպիսի զորավետ էր Կուսուսկոմի: Հենց այս պատճառով էլ նա նշանակվեց Դանուբում դսնվող ուսուսական բանակի հրամանատար:

Կուսուսկոմի ընդունած բանակը, վոր բաղկացած էր 45.000 հոգուց, ցրված էր ուղղամասկատում, հազար վերստի վրա: Թուրքերի բանակը բաղկացած էր 60.000

հոգուց և հենվում էր Ռուսչուկ բերդի վրա, վորը Մեջին Դանուբի բանալին էր:

Կուսուսկոմի հույս չունեք բաց կովում ջարդելու Թուրքերին: Նա մշակեց իր սլանը, վորն ուղարկեց ղենվորական մինիստրին:

«Աչքաթող չեմ անի թշնամու չմտածված քայլից ոգավելու առիթը: Դնալ դեպի վեղիրը (Թուրքական բանակը դիսավորողը), դեպի Շումլու, գրոհել նրա վրա այդ ամբողջունում, վոր ուժեղ է բնական և վորոշ չափով արհեստական դիրքերով,— և անկարելի յէ և վոչ մի ոգուտ չի բերի. այդպիսի ամբողջունը ձեռք բերելն էլ, ըստ պաշտպանողական պատերազմի պլանի, բոլորովին հարկավոր չէ: Բայց դուցե յես իմ համետ վարքով քաջայերեմ հենց իրեն, վեղիրին, վորը դուրս գա կամ հարավորին չափ աչքի ընկնող մի կորպուս ուղարկի դեպի Ռադզրադ կամ դեպի Ռուսչուկ: Յեվ յեթե իմ բախտից այդպիսի մի դեպք պատահի, ապա վերցնելով Եսսեն Յորդի ամբողջ կորպուսը, բացի փոքրաթիվ զորամասից, վորը պետք է մնա Ռուսչուկում,— կտանեմ թշնամու դեմ: Ամբողջուններ չունեցող Ռադզրադի մերձակայքում, ձեռնաու դիրքեր ընտրելով մեր զորքերի համար, իհարկե ասածն ոգնությամբ կջարդեմ յես նրան և առանց վորեւս սխալի կարող եմ հետապնդել մինչև 25 վերստ»:

Կրճատելով իր զորքերի ճակատը, Կուսուսկոմի դրանք հավաքեց վճուողական կենտրոնում, անցավ Դանուբը, հարձակվեց Թուրքերի վրա, շահեց առաջին ճակատամարտը և դրավեց Ռուսչուկ բերդը: Այնուհետև, սայթեցմամբ վոչնչացնելով Ռուսչուկի ամբողջունները, Կուսուսկոմի հանկարծակի թողեց այն: Ռուսները այդ շտապ «նահանջը» Թուրքերի վրա այնպիսի տպավորութուն թողեց, վոր իբր թե ուսուսական բանակը թույլ է և վտահ չէ իր ուժերի վրա, և նրանք անցան Դանուբի ձախ ափը, վորպեսզի վերջնականպես ջարդեն Կուսուսկոմի բանակը: Կուսուսկոմին էլ հենց այդ էր սպասում, վորպեսզի հակառակորդին զցի պատրաստված թակարդի մեջ: Թուրքերը հանդիպեցին իննը ռեգուսների, վոր Կուսուսկոմի կառու-

ցել եր դիչերով: Սկսվեց կռիվը, վորի ժամանակ Կուտու-  
զովը մի կորսուտ ուղարկեց Դանուբի աջ ափը, վորպեսզի  
փակի վեզիրի բանակի նահանջի ճանապարհը:

Ընկնելով անել զբուժյան մեջ, կտրվելով մատակա-  
րարման բաղաններից, չընկապտված լինելով և զբուհի յե-  
թարկվելով սուսների կողմից, թուրքական բանակն անձ-  
նատուր յեղավ:

Ռազմական հետադատողները շատ բարձր են դասում  
Դանուբում Կուտուզովի կատարած այս զործողութունը,  
վորպես առաջնակարգ զործողութուն ստրատեգիական և  
տակտիկական արվեստի տեսակետից:

Կուտուզովի զուշությունն ու խորամանկութունը  
միացած էին խորը նկատառման հետ, վոր կառուցված էր  
ամբողջ զբուժյունը հաշի առնելու վրա: Շա վճռական  
զործողությունների յեր անցնում միայն այն ժամանակ,  
յերբ լիակատար հաջողութուն և հաղթանակ ձեռք բերե-  
լու հույս ուներ:

Ռուսական և թուրքական բանակների միջև դինազա-  
դար կնքվեց: Լիազորները սկսեցին քննարկել հաշտության  
պայմանները:

Բանակցությունները մղվում էին Բուխարեստում,  
Ռուսաստանի կողմից Կուտուզովի և թուրքիայի կողմից—  
վեզիրի միջև:

Նապոլեոնի համար, վորն արդեն վորոշել էր արշա-  
վանք սկսել Ռուսաստանի դեմ, — այդ բանակցությունները  
չափազանց անհաճելի էին. Դանուբի բանակը կարող էր  
ուղարկվել դեպի Նեման: Այս պատճառով Նապոլեոնն իր  
պատվերակ Նարբոննին ուղարկեց Վիլնո, Ալեքսանդրի  
մոտ, վորպեսզի ուն ջարի հետ համաձայնության դա-  
պատերազմը ձգձգելու մասին: Կուտուզովն իր կողմից  
չտապեցնում էր հաշտության պայմանագրի ստորագրու-  
մը: Իսկ թուրքերը, գիտենալով, վոր Նապոլեոնը պատ-  
րաստվում է Ռուսաստանի դեմ պատերազմելու, անդիջո-  
ղություն էլին ցուցաբերում, ձգձգում էլին բանակցու-  
թյունները:

Ոգտվելով Նարբոննի և Ալեքսանդրի բանակցություն-

ներից, Կուտուզովը վեզիրին հավատացրեց, վոր Փրան-  
սիայի հետ պատերազմ չի նախատեսվում և վոր ամեն  
ինչ կկարգավորվի սկսված հաշտության բանակցություն-  
ներով: Կուտուզովի այս մանյովն արագացրեց թուրքերի  
հետ հաշտության պայմանագիր կնքելը: Պայմանագիրը  
ստորագրվեց մայիսի 22-ին, Բուխարեստում:

Յեթե Նապոլեոնը, խմանալով Բուխարեստում հաշ-  
տություն ստորագրելու մասին, կատաղեց Կուտուզովի  
հաջողություններից, ապա Ալեքսանդրը չհասկացավ Կու-  
տուզովի դիվանագիտական հաղթանակի ամբողջ կարևո-  
րությունը, թեպետ հետագայում այդ հաշտությունն ան-  
վանեց «աստժուց տրված»:

Աղատվելով բանակից, Կուտուզովը նոր նշանակում  
չստացավ և դնաց դյուղ:

IV

1812 թվի հունիսի 24-ի<sup>1)</sup> գիշերը Նեմանի մոտ Նապոլեոնի կենտրոնացրած 420.000-անոց բանակը հրաման ստացավ անցնել գետը:

Այդ ժամանակ Նապոլեոնի բանակի դեմ ուռւ հրամանատարությունը Նեմանին մոտեցրած ուներ Բարկլայի բանակը, բաղկացած 118.000 հոգուց և Բաղրատիոնի 2-րդ բանակը— 35.000 հոգուց: Այս բանակները դրավում էին 800 վերստ յերկարությամբ ուղմածակատի դիծը: Բարկլայի 12 զիվիզիաների դեմ Նապոլեոնն ուղարկեց 17 զիվիզիա, իսկ Բաղրատիոնի վեց զիվիզիաների դեմ—11 զիվիզիա:

Բանակների հրամանատարությունն իր վրա վերցրեց Ալեքսանդրը:

Ալեքսանդրի մերձավորները սարսափեցին այդ վորոշումից: Այսպես, իշխանուհի Յեկատերինա Պավլովնան դրում էր նրան.— «Ի սեր աստծո, չվերցնեք բանակի հրամանատարությունը, վորովհետև անհապաղ հարկավոր է մի այնպիսի մարդ, վորի նկատմամբ զորքը վստահություն զգա, իսկ դուք չեք կարող ներշնչել այդ վստահությունը»: Անկասկած է, վոր Ալեքսանդրը զլիսավոր հրամանատարի դերում վնասից բացի վոչինչ չէր կարող տալ: Ալեքսանդրի անչնորհքությունն ու ուղմական գործը չգիտենալը հանրահայտնի էին: Ալեքսանդրի այդ արատները ճակատագրական էին գառնում նրանով, վոր նա շրջապատված էր ինտրիգաններով և ապուշներով, վորոնց

1) Թվականները բերված են նոր տոմարով: 1812 թվի վերաբերյալ էին աշխատություններում թվակ սենները արված են հ ն տոմարով:

նա ոգտադործում էր իրրև խորհրդականներ և կոնսուլտանտներ: Հայտնի չէ, թե Ավստրիայում ինչ հետևանքներ ունեցան Ալեքսանդրին արված «խմաստուն» խորհուրդները, վոր հրամայել էր վեյրտները:

Այժմ Ալեքսանդրի մոտ նույնպիսի «խմաստության» մարմնացում էր հանդիսանում պրուսական գեներալ Պֆուլը, վորը, ի դեպ ասած, վոչ միայն չգիտեր ուսներեն լեզուն և Ռուսաստանը, այլև արհամարհում էր այն ամենը, ինչ ուսական էր: Կյանքի բոլոր դեպքերի համար Պֆուլն ուներ պատերազմի պատրաստի և ընդարձակ պլաններ, վորոնց միակ թերությունն այն էր, վոր նրանցից վոչինչ չէր դուրս գալիս:

Պֆուլն առաջարկեց, իսկ Ալեքսանդրն ընդունեց Դվինայի ափին գանվող Դրիսսե ափանում ամրացված ճամբար կառուցելու պլանը: Ըստ Պֆուլի «խմաստության», Դրիսսեյի ճամբարը 120.000 զինվորով պետք է փակեր Նապոլեոնի ճանապարհը դեպի Ռուսաստան: «Փլիստոփայելուց» անցան դործի: Բարկլայի բանակը տեղավորեցին շտապ կառուցված ճամբարում և սպասում էին Նապոլեոնին: Իսկ թե Նապոլեոնը կգնա՞ր Դրիսսեյի վրա, այդ մասին չէին էլ մտածում: Չլսեցին նաև Բարկլայի խորհուրդը նահանջելու մասին: Յեվ ահա մի քանի օրից հետո պարզվեց, վոր Նապոլեոնը գնում է վոչ թե Դրիսսեյի վրա, այլ անցնում է ուսական բանակի թիկունքը: Դավուլի կորստան արդեն դրավեց վիլինոն: Հարկավոր չեղավ շտապ թողնել «ամրացված ճամբարը» և հեռանալ դեպի վիտեբսկ:

«Յեթե ուսներն իրենք կամավոր կերպով չթողնեյին այդ դիրքը, ապա նրանք թիկունքից կենթարկվեյին դրոշի. միևնույն է, նրանք լինեյին 90.000 թե 120.000 հոգի, կընկնեյին խրամատների կիսաշրջանի մեջ և ստիպված կլինեյին անձնատուր լինելը», — դրում էր ուղմական պատմաբան Կլաուզելիցը, վորն անձամբ դիտել էր ճամբարը:

Ճամբարի վերաբերմամբ այդ «խմաստությունն» ունեցավ նաև այն դրական կողմը, վոր ուսական բանակը

Դրխտեյի ճամբարի վիժումից հետո ազատվեց Ալեքսանդրից և Պֆուլից: Ալեքսանդրին «Համոզեցին» զնալ Պետերբուրգ: Ռուսական բանակները տարվում էյին յերկրի խորքը: Նապոլեոնը, վոր գլխավոր ճակատամարտ եր տենչում, սկսեց ինքն իրեն կորցնել:

Ռուսներին հետապնդելը չափազանց թանգ եր նստում Նապոլեոնի վրա: Յրանսիական պատմաբան Ռամբոն «Արչավանք զեպի Ռուսաստան» ակնարկում գրում եր. — «Կողոպտաները, վորոնց հետևանքով զայրացած դուրզացիները դաժան պատիժներ էյին տալիս, դասալքությունը, հիվանդությունները, հետ մնալը — այս բոլորը հսկայական կորուստներ էյին պատճառում մեծ բանակին: Նեմանից մինչև Դվինա նա կորցրեց հարյուր հիսուն հազար հողի, մեծ մասամբ ոտարերկրյա կոնտինդենաների զինվորներ: Մյուրատի հեծելազորը 22.000-ից իջավ մինչև 14.000-ի. Նեյի կորպուսը — 36.000-ից մինչև 22.000-ի. Յեվգենիի բավարացիները, վորոնց մեջ համաճարակ ընկավ, — 27.000-ից մինչև 13.000-ի. Պինոյի իտալական զիվիլիան, վոր ուժասպառ եր յեղել յերեք-չորս ամսում 600 մղոն անցնելուց, 11.000 հոգուց իջել եր 5000-ի. նույնիսկ յերիտասարգ կայսերական զվարդիան իր զիվիլիաներից մեկից, 7000 հոգուց կորցրեց 4000 հողի. միայն հին զվարդիան տոկոսնությամբ տանում եր ամեն ինչ: Բանակի արիությունը բարձրացնելու, զինվորական պատիվն արթնացնելու, հետ մնացածներին, դուցե և զասալիքներին վերադարձնելու համար հարկավոր եր վորևե զգալի հաղթանակ տանել»:

Ծանր եր նաև ուսական բանակի զրությունը: Այն բոլոր փորձանքների թվին, վորոնց հետ կապված ե նահանջը, ավելանում եր նաև միասնական հրամանատարության բացակայությունը: Բարկլայի և Բաղրատիոնի մեջ սուր տարաձայնություններ կային պատերազմ մղելու հարցի շուրջը: Սեյապի և աշխատասեր Բարկլայը զգուշ տակտիկա յեր կիրառում և կողմնակից եր նահանջելուն, տաքարյուն Բաղրատիոնը զեպի կոխվ եր ձգտում: Վորջան նահանջում եր ուսական բանակը, այնքան որվում

էյին այդ տարաձայնությունները: Բարկլայի և Բաղրատիոնի, վորպես առանձին բանակների հրամանատարների միմյանցից անկախ լինելը և նրանց մեջ յեղած սկզբունքային տարաձայնությունները կարող էյին բանակը հասցնել ծանր հետևանքների:

Ռուսական բանակին առաջնորդ եր հարկավոր: Յերկիրն ո՞ւմ եր հանձնարարելու բանակը:

Բաղրատիոնի՞ն: Նրա մասին ճիշտ եր ասել Նապոլեոնը, թե՛ նա լավադույն գեներալն ե ուսական բանակում: Նա դուցե և ուզում եր զլիափորել բանակը, բայց քր տեմպերամենտով, խոշոր ռիսկ կատարելու պատրաստակամությամբ կարող եր բանակը ներզրավել վաղաժամ ճակատամարտի, և սյուրբոսյան հաղթանակի հասնել<sup>1)</sup>:

Ինչ վերաբերում ե Բարկլային, նա ժողովրդականություն չեր վայելում վոչ բանակում, վոչ ել յերկրում: Այն աղիտացիան, վոր նրա դեմ մղվում եր իր նահանջողական սուրասեղիայի կապակցությամբ, ժողովրդի աչքում նրան զավանդան դարձրեց:

Բանակի գեներալներից բանակի առաջնորդ ընտրելը դժվարություններ յեր հանդիպում:

Բանակում և ուս հասարակության մեջ բոլորը տալիս էյին միայն Կուտուզովի անունը:

\*\*\*

Նապոլեոնի զորքերը ներխուժեցին Ռուսաստանի խորքերը: Ռուսական բանակը շարունակում եր նահանջել ավելի ուժեղ թշնամու առաջ: Վրա էյին հասնում ահարկու դեպքեր, վորոնք պետք ե վճռելին ուս ժողովրդի բախտը: Բոլոր հայացքներն ուղղված էյին բանակին: Բոլորը սպասում էյին նրա հրամանատարների անելիքներին...

1) Պուրբորը Եղեբոսի թարգմանությամբ էր 318 - 2. 2. Թ. Թ. մեր թվագրությունից առաջ. Հոսմեացիների հետ պատերազմելիս Գալեհեց նրանց բայց ինքն ել մնաց առանց բանալի: Այստեղից ել ծագել զսյուրբոսյան հաղթանակը արահայտությունը:

Այդ ժամանակ մի խուլ դյուղում ապրում եր մերժ-  
ված, վիրավորված ու մոռացված Կուտուղովը: Նրան հի-  
շեցին պատահամբ: Մի անգամ Կուտուղովը հանկարծա-  
կի հրաման ստացավ ժամանել Պետերբուրգ: Անհապաղ  
պատրաստվելով, Կուտուղովը ժամանեց մայրաքաղաք:  
Այստեղ նրան հանձնարարեցին Պետերբուրգի աշխարհազոր  
կազմակերպել:

Այդ ահեղ որերում աննախանձելի դեր տվին սքանչե-  
լի փառք վայելող մարտական զեներային, վորն իրեն  
հանձնարարված ուսական բանակն Այստրիայում վար-  
պետութեամբ պաշտպանել եր Նապոլեոնի մահացու հար-  
վածներից:

Կուտուղովը բավական սառն եր վերաբերվում աշխար-  
հազորի կազմակերպմանը: Ազնվականների բողոքաթիւ  
ուղերձներին նա պատասխանում եր քաղաքավարութեամբ,  
խորհուրդ տալով չտաքանալ, նստել իրենց տեղում և  
պահպանել իրենց նահանգի սահմանները: Իսկ թե ինչպե-  
տ եր իրեն պահում ազնվական աշխարհազորը, այդ մասին  
պատմում ե ժամանակակիցը. — «Առածո ամեն մի որ  
աշխարհազորի բոլոր ազնվական սպաները ճաշում և ընթ-  
րում եյին նրա (կարվածատեր զեներալ Իզմայլովի)  
մոտ. աղ ու հացն ու զինին լիուլի բավականանում եր:  
Հարյուր հիսուն յեռաձի կառքեր, արագընթաց յեռաձի  
կառքեր, վորոնք բոլորն ել զեներալի սեփականութունն  
եյին, դտնվում եյին աշխարհազորի սպաների տրամա-  
դրութեան տակ, — զրոսնիր զբանցով, ինչքան քե՛ֆդ ու-  
ղենա»:

Ալեքսանդրի կատաղի ատելութունը դեպի Կուտուղո-  
վը չեւ կարող սովերել զորավարի մարտական արժանա-  
վոր վարկը: Ժողովուրդը, բանակը, ուսև հասարակու-  
թեան առաջավոր խավերը յով եյին ճանաչում Կուտուղո-  
վին, վորպես հայրենիքի իսկական դավակի և հայրենա-  
սերի, ու իրենց հիշողութեան մեջ պահում եյին արշա-  
վանքներում ու ճակատամարտերում նրա մատուցած ծա-  
ռայութունները:

«Պետերբուրգում, — պատմում ե Միխայլովսկի-Ղա-

նիլեսկին, — ժողովուրդը հետևում եր Կուտուղովի յու-  
րաքանչյուր քայլին, նրա յուրաքանչյուր խոսքը հաղորդ-  
վում եր իր կողմնակիցների միջոցով և հայտնի յեր դառ-  
նում. թատրոններում, յերբ արտասանվում եյին Դմիտրի  
Դոնսկոյի և Պոժարսկու՝ ուսաների համար թանգաղին ա-  
նունները, բոլորի հայացքները դառնում եյին դեպի Կու-  
տուղովը»:

Ալեքսանդրին հայտնի յեր յերկրի վերաբերմունքը  
դեպի Կուտուղովը: Գրոջը հասցեագրված նամակում նա  
գրում եր. — Պետերբուրգում բոլորն ասում են, թե դըլ-  
խավոր հրամանատար պետք ե լինի Կուտուղովը, ամբողջ  
Մոսկվան ցանկանում ե նրան տեսնել իբրև բանակի զե-  
կավար: Ալեքսանդրը չեւ կարող անտեսել յերկրի այդ  
միահամուռ պահանջի ճնշումը: Նա բարձրաստիճան  
մարդկանցից կազմված կոմիտեյին հանձնարարեց ընտրել  
գլխավոր հրամանատարի թեկնածու: Կոմիտեն վորոշեց. —  
«Սույն քննարկումից հետո, թե բանակների ընդհանուր գըլ-  
խավոր հրամանատարի նշանակումը պետք ե հիմնվի՝ նախ  
ուսումնական արվեստում վորոշ փորձի, դերազանց տա-  
ղանդների, ընդհանուր վստահութեան, այլև ավագութեան  
վրա, ուստի միաձայն համոզվում են սույն ընտրութեան  
համար առաջարկել հետևազորի զեներալ Կուտուղովին»:

Այն սրը, յերբ վաթսուներեթը տարեկան զորավարը  
մեկնում եր բանակ, Ալեքսանդրն ասաց.

— Հասարակութունը ցանկանում ե Կուտուղովի նը-  
շանակումը, — յես նշանակեցի նրան. ինչ վերաբերում ե  
անձամբ ինձ, յես ըլանում եմ ձեռներս:

Այդ առիթ տվեց, վոր Կուտուղովի նշանակումից հե-  
տո հընց հետևյալ որը զանազան բամբասանքներ և ինտ-  
րիգներ սկսվի բանակի սիրամ զորավարի դեմ:

Կուտուղովը չեւ վախենում Նապոլեոնից, բայց հար-  
դանքով եր վերաբերվում նրան: Յերբ մի սպա իրեն թույլ  
տվեց սուր արտահայտվել Նապոլեոնի հասցեյին, Կուտու-  
ղովը խոտութեամբ ասաց.

— Յերիտասարդ, ո՞վ ե քեզ իրավունք տվել ծանա-  
կելու ամենամեծ մարդկանցից մեկին...

Կուսուղովը մեկնեց բանակ: Չունենալով կամօղանխա-  
յի վորոշակի պլան, նա այնուամենայնիվ հաստատապես  
հավատացած էր, վոր վճռական ընդդէմն ուսական բա-  
նակը կկատարի իր պարտքը—կվճռէ չնայած թէ չնամուն և  
կվճռի Նապոլեոնի բախտը: Կուսուղովի սպառնալիցը հիմ-  
նովում էր այն հանդամանքի վրա, վոր նա ուս գինվորին  
ձանաչում էր թուրքական պատերազմներից, «Արքայական  
արշավանքից», ինչպես անվանում էյին 1805-1806 թվերի  
չարաբատիկ պատերազմը, և 1812 թվին ուսական զոր-  
քերի ցուցաբերած վարքից:

Պատերազմի մասնակից Լիպրանդիի հուշերի համա-  
ձայն, Փրանսիացիների դեմ մղված մարտերում զինվոր-  
ները կոչում էյին զարմանալի անվահերուժյամբ:

«Լուսաբացին հրաձգություն սկսեց հրաձգների  
չղթաներում, վորոնք դասավորված էյին քաղաքից դուրս  
(խոսքը վերաբերում է ողոստոսի 17-ին Սմոլենսկի մոտ  
տեղի ունեցած կռիվին): Վորքան խոտանում էր Փրանսիա-  
կան առաջավոր շղթան, այնքան ուժեղանում էր այդ  
հրաձգությունը: Ժամը 10-ին ժամանեց Բարկլայը և  
կանդ առավ Մալախովյան դարբասի տերբասում... Հիշ-  
յալ դարբասից դեպի աջ, արվարձանի մոտ դանվում էր  
Ուֆիմսկի գունդը: Այնտեղից անընդհատ լսվում էր «ու-  
ոս» աղաղակը և նույն ակնթարթում կրակն ուժեղանում  
էր: Այնտեղ ուղարկվածների թվում, — վորոնք հրաման  
էյին տարել՝ նշանակված գծից առաջ չանցնել, — ուղարկ-  
վել էյին նաև յես, նույնպիսի հրամանով: Յես գոտ այդ  
գնդի շեֆին, ղեներալ-մայոր Յիբուլսկուն, — լրիվ տարա-  
գով, ձի նստած, հրաձգների շղթայում: Նա պատաս-  
խանեց, թե անգոր է զսպել մարդկանց պոթիլումը, վո-  
րոնք իրենց դիմացի գերեզմանատունը դրաված Փրանսիա-  
ցիների մի քանի կրակոցներից հետո առանց վորևե հրա-  
մանի նետվում են դեպի սվինամարտ: Այն ժամանակվա  
ընթացքում, յերբ ղեներալ-մայոր Յիբուլսկին ինձ ասում  
էր այդ, շղթայում վորոտաց «ուոսն»: Նա սկսեց դոռալ,  
նույնիսկ սրով հետ քշել իր հրաձգներին, բայց նրան  
հնազանդվում էյին միայն այնտեղ, ուր նա դանվում էր:

Միևնույն ժամանակ նրանից մի քանի քայլ հեռու զարձայ  
լսվում էր «ուոս» և նետվում էյին թշնամու վրա:

Նույնն էյին անում զիվիլիայի նաև մնացած գնդե-  
րը...»:

Պատմությունը չի նշել անհատ զինվորների սխրագոր-  
ծությունները: Միայն կռիվներին մասնակցողների հուշե-  
րում հանդիպում են առանձին եպիզոդներ:

Փրանսիական զնդապետ Փարեր-դե-Փորը, պատմելով,  
թե ինչպես ուսները թողին վառվող Սմոլենսկը, բերում  
է այսպիսի մի որինակ. — «Ռուս հրաձգների մեջ իր քա-  
ջությամբ և տոկունությամբ առանձնապես աչքի ընկավ  
մի ուս յեղեր (հրացանաձիղ), վորը դիրք էր բռնել հենց  
մեր դիմաց, ափում, ուսենիների հետևում. մենք նրան  
չուցնել չէյինք կարողանում վոչ նրա վրա կենտրոնացված  
կրակով, վոչ էլ նույնիսկ հատկապես նրա դեմ ուղղված  
թնդանութով, վորը ջարդեց բոլոր ծառերը, վորոնց հե-  
տևից կրակում էր նա. բայց հրացանաձիղը բոլորովին չէր  
հանդատանում և լուց միայն դիչերը, իսկ հետևյալ որը,  
յերբ աջ ափն անցնելուց հետո մենք հետաքրքրությունից  
դրված գիտեցինք հրացանաձիղի՝ հիշատակության ար-  
ժանի այդ դիրքը, ջարդված ու փշրված ծառերի կույ-  
տում տեսանք յեղերական զնդի մի յենթասպա, վոր ըն-  
տում տեսանք յեղերական զնդի մի յենթասպա, վոր ըն-  
կած էր յերեսի վրա, սպանվել էր հակառակորդի արկով,  
քաջարար ընկել այստեղ իր դիրքում»:

Մտնելով Ռուսաստանի խորքերը՝ Փրանսիացիք հան-  
գիպեցին ժողովրդի ահեղ և հզոր դիմադրության: Գյու-  
ղացիները թողնում էյին իրենց տները, վերցնում իրենց  
ամբողջ աղքատիկ գույքը և անասուններն ու փախչում  
անտառները: Գյուղերը դատարկ էյին, տները վառվում  
էյին, իսկ պարենի պաշարները վոչնչացված էյին կամ  
թաղցրած: Սարկացիների հարձակման դեմ այդ «պաս-  
տիվ» դիմադրությունը շուտով սկսեց փոխվել պարտիզա-  
նական ակտիվ պայքարով, վոր ժողովուրդը մղում էր  
Փրանսիական բանակի դեմ:





— Կուսուղովը նշանակված է գլխավոր հրամանատար:

Այս լուրը վողեւորեց զինվորներին: Արդեն ստեղծեցին հետևյալ ասացվածքը. «Կուսուղովն է գալիս, Ֆրանսիացիներին հարված է տալիս»:

Ժողովրդի ջերմ վողջույնների տակ, Կուսուղովն ոգոստոսի 24-ին թողեց Պետերբուրգը: Պետերբուրգից մինչև բանակ հասնելը նա անընդհատ զբաղված էր: Կուսուղովը զեկուցումներ էր բուռ, կարգադրություններ էր անում նոր զորամասեր կազմակերպելու մասին, նշում էր աշխարհագրի կենտրոնացման կետերը և այլն: Ճանապարհից նա գրում էր Միլորադովիչին. — «Ժամանակը և հանգամանքները կողմերից վորեւ մեկին կմղեն դեպի վճռական գործողություններ, այժմյան խնդիրն է փակել թշնամու ճանապարհը դեպի Մոսկվա»: Այնուհետև նա մատնանշում էր այն տեղը, ուր պետք էր կենտրոնացնել սթանդակ զորքերը, «վորպեսզի դրանք առանց հապաղելու պաշտպանեն և ուժեղացնեն դեպի Մոսկվա նահանջող գլխավոր բանակը»:

Վիչնի-Վոլոչոկում Կուսուղովին միացավ զենեբայ Բեննինդսենը — պալատական ինտրիգանը և Ալեքսանդրի լրտեսը: «Կուսուղովը վերցրեց նրան, — գրում է ազգական պատմաբան զենեբայ Կոլյուբակինը, — կատարելով թագավորի կամքը, զուցե է չթաղցնելով իր հակակրանքը նրա նկատմամբ: Սրբառես Կուսուղովը շատ լավ էր հասկանում, վոր Բեննինդսենը փայփայում է մի միտք, — յեթե Կուսուղովը հիվանդանա կամ նրա հետ վորեւ բան պատահի, նրա փոխարեն ինքը գլխավորի բանակը: Այդ էր նախատեսում նաև Բեննինդսենի «բոլոր բանակների շտաբի պետ» նշանակվելը: Բացի Բեննինդսենից, Ալեքսանդրը Կուսուղովի մոտ ուղարկեց անդլիական լրտես Ռորերտ Վիլսոնին: Կուսուղովի կարգադրությունների մասին հաղորդելով Ալեքսանդրին, Վիլսոնն այդ տեղեկությունները միաժամանակ հայտնում էր անգլիական կառա-

վարությանը: Վիլսոնն ու Բեննինդսենը հանդիսանում էին ինտրիգների այն մեխանիզմի թաղնված զսպանակները, վոր ամբողջովին աշխատել սկսեց գլխավոր հրամանատարի շտաբում:

Կուսուղովը շտապում էր դեպի բանակ: Անցնելով Տորթոկը և բռնելով Մոլոկենսկի ճանապարհը, նա հազորակեց Բարկլային. — «Ներկա անձրևային ժամանակը խանգարում է ինձ վաղը ճաշին բանակում լինել, բայց հենց վոր լույսը բացվի և ինձ համար հնարավոր լինի շարունակել ճանապարհս, յես հույս ունեմ 17-ից 18-ը անպայման լինել գլխավոր շտաբում»:

Ռուսական նահանջող բանակը դիրքեր զբաղեցրեց Յարևո-Չայվիչի մոտ:

Բարկլայի շտաբի պետ Յերմոլովն իր հիշատակարանում մատնանշում է. — «Յարևո-Չայվիչի մոտ ընտրված է միանգամայն ձեռնտու դիրք, և գլխավոր հրամանատարը վորոշեց (այստեղ) ճակատամարտ տալ: Սկսվեցին ինժեներների աշխատանքները և բանակը մարտական դիրք բռնեց: Բաց տեղերը թշնամուն խանգարում էին թագցնել իր շարժումը: Մեր ձեռքում դանդաղ բարձրությունները, մեծ առավելութուն տալով մեր հրետանու գործողությանը, դժվարացնում էին թշնամու մոտենալը. նահանջելը հարմար էր: Մեր բանակը, վոր պատրաստված էր ճակատամարտին, շատ անգամ այլևս չէր հավատում, վոր տեղի կունենա այդ ճակատամարտը, թեպետ անհամվոր տեղի կունենա այդ ճակատամարտը, թեպետ անհամբերությամբ ցանկանում էր այն. սակայն բանակի կանգ առնելը, արագացվող աշխատանքները ցույց էին տալիս, վոր գլխավոր հրամանատարի (Բարկլայի) մտադրությունը վճռական է, և բոլորն էլ կրկին հուսով էին, վոր նահանջը կվերջանա:

Լուր է ստացված Կուսուղովի նշանակման մասին... Գրավված՝ դիրքում աշխատանքների արագացումը ցույց է տալիս, վոր նա (Բարկլայը) մտադիր է ճակատամարտ սկսել մինչև նրա (Կուսուղովի) ժամանելը...»:

Նապոլեոնի բանակը հալչում էր: Ձինվորների վողին ու արամադրությունն ընկնում էր: Պարենի պաշարները

սպառնալիցին: Ձիերի կերի հայթայթումը հետզհետե դեժ-  
վարանում եր: Սկսվեցին հորդ անձրևներ: Փորձված մար-  
շալները պեստիմիստորեն եյին նայում ապադային: Արդեն  
լավում եյին այսպիսի խոսքեր.

— Մոսկվան մեզ կկործանի:

— Ժամանակն է դադարեցնել հարձակումը:

Նապոլեոնը լուռ եր և չարացած: Նա համառ կերպով  
դիտավոր ճակատամարտ եր մնտուում: Յարևո-Չայմիչչի  
մոտ ուռաների կանգ առնելը թևավորեց նրան: Վերջա-  
պէ՛ս:

Յերմոլովը, Բարկլայի շտաբի պետը, Յարևո-Չայ-  
միչչի մոտ յեղած դիրքը ձեռնառու յեր համարում: Բայց  
չստերը համաձայն չեյին նրա կարծիքին: «Գալիս ենք  
Յարևո-Չայմիչչի մոտ գտնվող ճամբարը, — պատմում է  
բնակապետական մասի սպա Շչերբինինը, — մեր դիրքերի  
հետևում անմիջականորեն գտնվում է խիստ ճահճոտ ա-  
փերով մի դետակ: Չափազանց վտանգավոր է այդպիսի  
դիրքում ճակատամարտ սկսելը: Մինչդեռ Բարկլայն ու-  
զում է կռիւի բռնվել հենց այնտեղ: Տոյն այնքան համոզ-  
ված եր այդ ճամբարի վտանգավորության մասին, վոր  
ծուռն է չոքում Բարկլայի սուաջ, վորպեսզի նրան համոզի  
հետ կանգնել այստեղ կռվելու մտադրությունից: Բարկ-  
լայը չի լուում իր դիտավոր բնակապետի հորդորները, սա-  
կայն հանկարծ հայտնում են, վոր ժամանել է դեներալ  
Կուտուզովը»:

— Որը մատախրապատ եր, բայց զինվորների և սպա-  
ների սրտերը պայծառացան, — պատմում է պատերազմի  
մասնակիցը:

Մի ուրիշ ակննատես իր նամակում դիտավոր հրամա-  
նատարի ժամանելու մասին պատմում է. — «Վորքան  
հեշտ է դուր դալ զինվորին: Հարկավոր է միայն ցույց  
տալ նրան, վոր հողում ես նրա բախտի մասին, վոր մըտ-  
նում ես նրա դրության մեջ, վոր նրանից պահանջում ես  
անհրաժեշտն ու հարկավորը և վոչ մի ավելորդ բան:  
Յերբ պայծառափայլ իշխանն առաջին անգամ շրջում եր

դնդերը, զինվորներն իրար անցան, սկսեցին մաքրվել  
ձգվել և շարք կանգնել:

— Հարկավոր չէ՛, այդ բոլորը հարկավոր չէ, — ա-  
սում եր իշխանը, — յես յեկել եմ միայն նայելու, թե  
արդյոք առո՞ղջ եք դուք, զավակներս: Արշավանքի ժամա-  
նակ զինվորը չի կարող լավ հագնվելու մասին մտածել.  
Նրան հարկավոր է հանդատանալ աշխատանքներից հետո և  
պատրաստվել հաղթանակին...»:

Դիտելով Յարևո-Չայմիչչի մոտ յեղած դիրքերը, Կու-  
տուզովը հրաման տվեց.

— Բանակները պետք է նահանջեն Գժատսկ տանող  
ճանապարհով:

Նահանջը սլաշտպանող արյերգարդի (վերջապահ զոր-  
քի) հրամանատար նշանակվեց Կոնովնիցինը:

Նապոլեոնը նորից հիասթափվեց:  
Մյուրատի հեծելազորը, Դավուի և Պոնյատովսկոե  
կորպուսները նեավեցին Կոնովնիցինի արյերգարդի վրա:

Սակայն յերեք զինվորներին՝ Նիկիֆոր Պոնոսովի,  
Ռուսֆրի Տիմաշենկոյի և Նիկիտա Յակովլևի քաջու-  
թյան, սառնարտության և հնարամտության շնորհիվ հե-  
տապնդողների հարվածը հետ մղվեց: Նրանք, «արյեր-  
գարդում մնալով վերջինները, թշնամու արագ հարձակ-  
ման պայմաններում, ուժեղ կրակոցների տակ կամավոր  
կերպով, արանձնահատուկ քաջությամբ և անվեհերու-  
թյամբ, համոզելով ընկերներին, արագ և շտապ վառեցին  
թյամբ, իջեցրին ամբարտակը, վորով հեղեղեցին դե-  
տալ իսկ թշնամու կողմում, դետալի ճահիճով ձգվող  
միակ ճանապարհն անցնում եր դյուղի միջով, վորը վա-  
ռեցին, դրանով կանգնեցրին թշնամու հրետանին և փրկե-  
ցին նահանջող հրացանաձիգներին, վորոնք կարող եյին  
չըջապատվել թշնամու կողմից»:

Բանակը նահանջում եր դեպի Բորոդինո:  
Լինելով արտաքին փայլի, ձևականության և քայտ-  
մարդության (վորով այնքան տարվում եր Ալեքսանդրը)  
թշնամի, Կուտուզովը հրամայեց Յարևո-Չայմիչչից (ինչ-  
պես նաև հետագա յերթերը) նահանջը կատարել այնպես,

վոր գինվորներն առավելագույն չափով ազատ լինեն հան-  
գիսավորությունից և նրանց հնարավորություն արվի  
ավելի ազատ քայլել շարքում:

Կուսուղովը կրճատեց շտաբային սպաների թիվը և  
փորձում եր վերջ տալ բյուրոկրատական գրադրության՝  
փոխադարձ վստահության զգացում ներշնչելով գեներ-  
ալներին և սպաներին: Կուսուղովի բանակ ժամանելը և  
նրա, վորպես գլխավոր հրամանատարի գործունեություն  
առաջին քայլերը բարձրացրին զորքերի տրամադրու-  
թյունը, հաղթանակի հավատ ներշնչեցին:

Սեպտեմբերի 3-ին ուսսական բանակը դիրք բռնեց  
Բորոգինոյի մոտ:

Զորքերը դիտելին, վոր Մոսկվան առանց կովի չի  
տրվելու:

Ժողովրդի մեջ Կուսուղովի անվան շուրջը պոետա-  
կան լեգենդների պսակներ ելին հյուսվում:

Մեր հայր կաղակ Պրատովը քաջ գինվեց,  
Մոսկովի մոտ գնդերի հետ պատրաստվեց.

Ու վեր կացած՝ յասաուլներ ե ջոկում,—

Ֆրանսացու դեմ կռվելու յե ուղարկում:

Յասաուլները Ֆրանսացուն լավ տվին,

Ֆրանսական մի մայրի գերեցին,

Ու գերվածին խկույն ևեթ վեր առան,

Են Ֆելդմարշալ Կուսուղովի մոտ տարան...

Կուսուղովը մի հարց ու փորձ սկսեց.—

— «Ասա՛ դու ինձ, Ֆրանսիական մայրիկ,

Փարիզում, դու, արդյոք շա՞տ ուժ ունես մե՞ծ»:

— «Մե՞ծ ուժ ունի՞մ, ուժ քառասուն հազարի,—

Հաշիվ չկա Նապոլեոնի ուժերին»:

Կուսուղովը նրա թշին ե խփում.—

— «Մոտ՛ւմ ես դու, կեղծ՛ում ես դու, մայրիկ,

Ֆրանսացուց չեմ վախենում յես յերբեք,

Կհասնեմ հենց Նապոլեոնի՛ն, հենց իրե՛ն,

Սրամարտի կրոնրվեմ նրա հետ»:

Այ արևը չե՛ր, վոր դաշտում շողշողաց,—

Այն Կուսուղով քաջի սուրն եր, վոր շողաց...

\*\*\*

Կուսուղովը, հակառակ իր համոզման, վորոշեց  
Մոսկվայի մոտ կովի բռնվել Նապոլեոնի հետ: Այդ ելին  
պահանջում յերկրի հասարակական կարծիքը և բանակի  
տրամադրությունը: Կուսուղովի համար վճռված եր  
Մոսկվան թողնելու հարցը, թեպետ նա այդ թաղցնում եր  
նույնիսկ ամենամոտ աշխատակիցներից: Կուսուղովը հա-  
վատարիմ եր իր ստրատեգիային,— ուժասուլառ անել հա-  
կառկորդին, նրան յերկրի խորքը քաշել այնքան ժամա-  
նակ, մինչև վոր սեղերվները մոտենան և ուսսական բա-  
նակը Նապոլեոնի բանակից ավելի ուժեղ լինի:

Նապոլեոնի դեմ ճակատամարտ մղելու տեղն ընտրվեց  
Բորոգինոյի մերձակայքը:

Բորոգինոյի դիրքը մոտ 7 վերստ յերկարությամբ ըն-  
կած ե Կոլոչ դետի աջ ափին, Դորոնինից և Շեվարդինից  
սկսած, Բորոգինո դյուղի միջով, Սմոլենսկի ճանապարհի  
յերկու կողմերում: Ռուսական զորքերը դիրք բռնեցին  
Կոլոչ դետի ափերին, Սմոլենսկի հին և նոր ճանա-  
պարհների միջև: Աջ թևը հասնում եր մինչև դետի թեք-  
վածքը և պաշտպանվում եր դետով ու անտառով: Ձախ  
թևը վերջանում եր Ուտիցի դյուղի մոտ, թփերում:

Նապոլեոնը Բորոգինոյին մոտեցավ 130.000 հոգուց  
բաղկացած բանակով և 587 թնդանոթով: Կուսուղովի  
տրամադրության տակ կար 120.000 հոգի և 640 թնդա-  
նոթ:

Կուսուղովը վոչ մի առանձին հրաման չեր տալիս  
զորքերի տրամադրությունը բարձրացնելու համար—այդ  
անհրաժեշտ չեր: Զորքերը կովի ելին սպասում: Շրջելով  
ոսպմաճակատը, Կուսուղովը, վորին հատուկ եր պարզ  
խոսելու կարողությունը, դիմում եր գինվորներին այն-  
պիսի խոսքերով, վորոնք գերձ ելին վորեւե փրոնու-  
թյունից:

Նա ասում եր.

— Դուք պետք ե պաշտպանեք հայրենի յերկիրը, հա-  
վատով և ճշմարտությամբ ծառայեք մինչև արյան վերջին

կաթիլը: Յուրաքանչյուր գունդ կողտագործվի կովի համար: Ձեզ, ինչպես ժամապահներ, կիտխեն յուրաքանչյուր յերկու ժամից հետո:

Մարտի նախորդակին Կուտուզովը գլխադրեցեայում գրում եր.

«... Սույն մարտակարգով յես մտադիր եմ դեպի մեզ քաշել թշնամու ուժերը և գործել նրա շարժումներին համապատասխան: Հնարավորութուն չունենալով ճակատամարտի ժամանակ գտնվել բոլոր կետերում, հույս եմ դնում գլխավոր հրամանատարների հայտնի փորձառութեան վրա, ուստի և նրանց եմ թողնում գործողութունները կշռադատումը՝ թշնամուն հաղթելու համար: Բոլոր հույսերը դնելով ամենակարողի ոգնութեան և ուսական գլխավորների քաջութեան ու անվեհերութեան վրա, թշնամու ուժերին յերջանիկ հակահարված տալու դեպքում սեփական հրաման կտամ նրան հետապնդելու, վորի համար կսպասեմ գործողութունների վերաբերյալ անընդհատ զեկույցների, գտնվելով ճիշդ կորպուսի թիկունքում: Սույն դեպքում ավելորդ չեմ համարում հիշեցնելու պ. պ. գըլ-խավոր հրամանատարներին, վոր ռեզերվները պետք ե պահվեն վորքան կարելի յե յերկար, վորովհետև այն դեներալը, վոր պահում ե ռեզերվը, անպարտելի յե: Հարձակողական շարժման դեպքում այն կատարել խիտ զորասյուներով գրոհելով, ամենևին չգրադվել կրակելով, այլ արագ գործել սառը դենքով: Հետևազորի զորասյունների միջև ունենալ հեծելազորի վորոշ մաս, նույնպես զորասյուներով, վորոնք ոժանդակեն հետևազորին: Անհատող կովի դեպքում դեներալ Վեստիցկին նշել ե մի քանի ճանապարհներ, վորոնք նա ցույց կտա պ. պ. գլխավոր հրամանատարներին և վորոնցով պետք ե նահանջեն բանակները: Սույն վերջին կետը տրվում ե միայն ի գլխութուն պ. պ. գլխավոր հրամանատարներին»:

Վրա հասավ սեպտեմբերի 6-ի յերեկոն — ճակատամարտի նախորդակը: Ռուսական բանակը տեղավորվել եր բլավակներով: Ձինվորները նստել եյին խարույկների մոտ, սրում եյին սվինները, պատրաստում սրերը, լվացվում,

մաքուր սպիտակեղեն հագնում: Ռուս գլխավորները լրջախոհ և հանդիստ պատրաստվում եյին մեռնել հայրենիքի համար: Գամին Փրանսիական ճամբարից ճիշեր եր բերում դեպի ռուսական բլավակները: Նապոլեոնը չըջագայում եր գնդերում:

Նա բանակին դիմեց հետևյալ հրամանով.—

«Ձինվորներ, ահա այն ճակատամարտը, վոր դուք ցանկանում եյիք: Հաղթանակը ձեզնից ե կախված: Այն անհրաժեշտ ե մեզ համար, այն մեզ կտա բոլորը, ինչ վոր պետք ե,— հարմար բնակարաններ և շուտափույթ վերադարձ դեպի հայրենիք: Կովեցեք այնպես, ինչպես կովում եյիք Սուստերլիցի, Ֆրիդլանդի, Վիտեբսկի և Սմոլենսկի մոտ: Թող հետագա սերունդը հպարտութեամբ հիշի այսորվա ձեր սխրագործութունները: Յեվ թող սեն ձեզանից ամեն մեկի մասին՝ նա յեղել ե Մոսկվայի մոտ մղված մեծ ճակատամարտում»:

Կուտուզովն ամբողջ գիշերը չքնեց: Յեվ հենց վոր շույսը բացվեց, նա ձի նստեց ու դնաց դեպի Գորկի գյուղը, մարտկոցի մոտ:

Մշուշը, վոր գիշերով իջել եր կովի դաշտի վրա, ցրվում եր: Շողաց արևի առաջին ճառագայթը:

Նապոլեոնը, վոր ձիով սլանում եր դեպի Շեվարդինի ռեդուտը (փոքրիկ ամրոց) բացականչեց.

— Սա Աուստերլիցի արևն ե:

Առավոտյան վեցի կեսն եր, յերբ Շեվարդինի ամրոցիկի կողմից լավեց առաջին կրակոցը:

Մարտը սկսվեց:

Մի քանի հարյուր թնդանոթները և մոտ յերկու հարյուր հազար հրացաններն իրենց վորսածունքով ցնցում եյին կովի դաշտը և հնձում կավոզների շարքերը:

Կուտուզովը Գորկիի մոտից, ռուսական դիքքի կենտրոնից ուշադրութեամբ հետևում եր մարտի ընթացքին, ոժանդակ ուժեր եր ուղարկում վտանգավոր ճակատամարտերը, ցուցումներ եր տալիս զորքերի վերախմբավորման մասին: Մարտի դանդաղ կետերից գլխավոր հրամանատարին զեկույցներ եյին դալիս ծանր կորուստների մա-

սին: Սպանված են մի քանի լավագույն զեներալներ: Ընկալ մասնացու վիրավորված Բաղրատիոնը:

Ռուս զինվորները կռվում էյին չտեսնված քաջությամբ:

Արդեն կեսօրից անց եր, իսկ ճակատամարտը նույն զարհուրեցուցիչ դաժանությամբ շարունակվում եր գերբերի ամբողջ ճակատով:

Նապոլեոնը մռայլ եր: Ռուսները չէյին փախչում, չկային զեկույցներ ուսաների զորամասերը գերի վերցնելու մասին: Նապոլեոնն առաջին անգամն եր հանդիպում այդպիսի համառ պաշտպանության:

Լուսկայց և մռայլ Նապոլեոնն անձանաչելի յեր մարշալների համար: Նա այդպես յերբեք չեր յեղել:

Մարշալ Նեյն ասաց, վոր Նապոլեոնը Բորոզինոյում մոռացել ե իր արհեստը...

Սպաները մեկը մյուսի հետևից դալիս էյին Նապոլեոնին զեկուցելու, բայց նրանցից վոչ մեկը լուր չեր բերում հաղթության մասին:

— Ի՞նչ են անում ռուսները, — հարցնում եր Նապոլեոնը:

— Կանգնած են իրենց տեղում:

— Ուժեղացրեք կրակը. նշանակում ե նրանք ելի յենուղում...

Յեվ Փրանսիական մարտկոցներն ուժեղացնում էյին թնդանոթածգությունը. այդ որվա ընթացքում նրանք 60.000 անգամ կրակեցին թնդանոթներից, վոր այն ժամանակվա համար չլաված յերևույթ եր:

Յերեկվա ժամը յերբին Փրանսիացիների գրոհները դադարեցին: Կուսուղովը գոհ եր կովի վերջավորությունից: Չառամած զորավարը, արտաքուստ կայտառ, հագիվ եր մնում ձիու վրա, վորը գիշերվան անքնությունից և որվա լարվածությունից առաջացած հոգնածության հետևանք եր: Բարկլայի կողմից նրան ներկայացավ զնդապետ Վոյցոգենը և զեկուցեց.

— Չորքերը քայքայված են և ճակատամարտը տանուլ ե տրված:

Այդ որվա ընթացքում Կուսուղովն առաջին անգամ կորցրեց հանգստությունը, նա խիստ տոնով ընդհատեց Վոյցոգենին և բարկությամբ գոչեց.

— Հաղորդել Բարկլային, վոր նրա ուղարկած տեղեկությունները ճիշտ չեն: Ճակատամարտի խսկական ընթացքն ինձ ավելի լավ ե հայտնի, քան Բարկլային:

Կուսուղովը դժվարությամբ եր շունչ առնում:

— Ամեն տեղ հետ են մղված, — Չլայնանալով կըրկնում եր նա, — Հե՛տ են մղված:

Ձիով յեկավ Ռաևսկին և զեկուցեց.

— Չորքերն ամուր կանգնած են իրենց տեղերում:

— Ուրեմն դուք մյուսների նման չե՞ք մտածում, վոր մենք պետք ե նահանջենք, — հարցրեց Կուսուղովը:

— Ընդհակառակը, ձերդ պայծառություն, վճռական կռիվներում հաղթող ե մնում նա, ով համառ ե, — պատասխանեց Ռաևսկին, — և իմ կարծիքով...

— Կայսա՛րով, — ձայն տվեց Կուսուղովն իր համհարդին, — նատիք, գրիք վաղվա հրամանը, — իսկ դու, — դիմեց նա մյուսին, — զնա ճակատի դժով և հայտարարիք, վոր վաղը մենք գրոհում ենք:

Սակայն, յերբ անձրևային ու ցուրտ գիշերով գործերը հավաքվում էյին իրենց դրոշակների շուրջը, պարզվեց, վոր սարսափելի կորուստներ են յեղել. մի քանի գնդերի հրամանատարները պորուչիկներ էյին:

Հսկայական կորուստներ ունենալով, Կուսուղովը չեր կարող հետևյալ օրը ճակատամարտի բռնվել Նապոլեոնի հետ:

Ռուս ժողովուրդը Բորոզինոյի ճակատամարտն ընդունեց վորպես հաղթանակ, թեև ձևականորեն ճակատամարտը տանուլ եր տրված ռուսական բանակի համար: Բանակում և ժողովրդի մեջ ե՛լ ավելի աճեց Կուսուղովի ժողովրդականությունը: Հետագայում Նապոլեոնը Բորոզինոյի ճակատամարտի մասին գրեց. — «Իմ բոլոր ճակատամարտերից ամենասարսափելին, դա այն ճակատամարտն ե, վոր յես տվի Մոսկվայի մոտ: Այնտեղ Փրանսիացիները ցույց տվին, վոր արժանի յեն հաղթանակ

տանելու, իսկ ոռւանքն արժանի յեղան անպարտելի լինելու» :



Կորուստների մասին մանրամասն տեղեկութիւններ օտանալով, Կուտուզովը վերջնականապէս վորոշեց Մոսկվան հանձնել: Ռուսական բանակի հերոսական զնդերը սկսեցին նահանջել դեպի ոռւսական հին մայրաքաղաքը:

Սեպտեմբերի 13-ին Կուտուզովի գլխավոր շտաբում, Ֆրիլի դյուղում ուղղման խորհուրդ հրավիրվեց:

Գնալով խորհուրդ՝ Կուտուզովն իրեն շրջապատած գեներալներին ասաց.

— Լավ եմ մտածում թե վատ, միայն թե այլևս չեմ կարող վոչ վորքի վրա հույս դնել...

Կուտուզովը խորհրդում քննութեան դրեց մի հարց.

— Ռուսաստանի վրկութիւնը բանակի մեջ է: Արդյոք ավելի ձեռնտո՞ւ յե կորցնել բանակն ու Մոսկվան, ընդունելով ճակատամարտը, թե՞ Մոսկվան տալ առանց ճակատամարտի: Ահա թե ինչ հարցի մասին է, վոր յես ցանկանում եմ իմանալ ձեր կարծիքը:


Սկսվեցին վիճարանութիւնները: Կարծիքները տարբերվում էին:

Կուտուզովը ծանր շունչ առնելով դիմեց խորհրդին.

— Այսպէս ուրեմն, պարոններ, դուրս ե գալիս, վոր ուրիշների կտորած կճուճների համար յես պետք է վճարեմ: Պարոններ, յես լսեցի ձեր կարծիքները: Մի քանիսն ինձ հետ համաձայն չեն լինի: Բայց յես (նա կանգ առավ), յես իմ թագավորի և հայրենիքի տված իշխանութեամբ հրամայում եմ նահանջել:

Խորհրդից հետո խելացի, արեհեր գորավարը դիչերն անքուն անցկացրեց: Շտաբը լսում էյին, թե ինչպէս եր նա լալիս:

Կուտուզովը ծանր վորոշում ընդունեց: Նա դիտեր, վոր դրանով իր դեմ է հանելու պալատական ամբողջ ազդեցիկ խմբակին և ե՛լ ավելի յե բարկացնելու իր գլխա-



Ռուսական խորհուրդ, 1812 թ.

վոր թշնամուն՝ Ալեքսանդրին: Բայց Կուտուզովն ուներ այսպիսի սկզբունք, — քանի վոր վորոշումն ընդունված է, պետք է մինչև վերջ կատարվի:

Կուտուզովի դեմ ուղղված պայքարը զլխավորեց Ռոստոպչինը՝ Մոսկվայի քաղաքապետը, վորը մի կարյեքիստ, շառլատան և ստոր մարդ էր: Դեռ մինչև Բորոգինոյի ճակատամարտը Ռոստոպչինը Կուտուզովին դրել էր. — «Յեթե մարդկանց մեծ կորուստը և Նապոլեոնի ուժերի դերակշռութունն ստիպեն թողնել դիրքերը և նահանջել դեպի Մոսկվա, ապա յես կհավաքեմ բազմաթիվ, տասնյակ հազարավոր քաջեր և կներկայանամ ձեզ»: Իսկ յերբ Կուտուզովը Ռոստոպչինին խնդրեց «Մոսկվայի դրոժինան» ուղարկել թշնամու դեմ, Ռոստոպչինն իր որագրում գրեց. «Յես նրան վոչինչ չպատասխանեցի»:

Նա խաբեց Կուտուզովին: Վոչ մի դրոժինա նա չուներ: Այդ սրիկան, Ալեքսանդրի բարեկամը, Ֆիլիոմ ռազմական խորհրդի հավաքվելու որը ներկայացավ Կուտուզովին և այդ մասին իր կնոջը գրեց. «Այսոր առավոտյան յես յեղա անիծված Կուտուզովի մոտ: Այս գրույցը հնարավորութուն տվեց տեսնելու մեր ռազմական ուժերի առաջնորդի ստորութունը, անկայունութունն ու վախկոտութունը...»:

Բանակը թողեց Մոսկվան: Փրանսիացիները սեպտեմբերի 15-ին մտան վառվող մայրաքաղաքը<sup>1)</sup>:

Մոտենալով Դորոգոմիլովսկի ուղեկալին՝ Նապոլեոնը կանչեց կոմս Դարյային:

— Գնացեք և ինձ մոտ բերեք բոյարներին:

Նապոլեոնն իզուր ժամանակ կորցրեց սպասելու վրաներա մոտ չբերին «բոյարներին», քաղաքի բանակներով մետաքսե բարձի վրա դրված: Մոսկվան դատարկ էր:

Մոսկվայի անկումը դարձավ մի ազդանշան, վորով

1) Կլաուզիցի հաշվով Փրանսիացիները Կովնոյից Մոսկվա հասան 12 շաբաթվա ընթացքում: Կովնոյից դուրս լեկաձ 280,000 զինվորներից Մոսկվա հասավ վոչ ավելի, քան 90,000 հոգի:

ընդհանուր ժողովրդական պատերազմ սկսվեց ոտաբերկրյա հափշտակողների դեմ: Նապոլեոնն այդ շուտով դուաց: Նստած լինելով ամայացած և կիսով չափ այրված մայրաքաղաքում, նկատի ունենալով մոայլ ձմեռվա և ձմեռային կամսղանխյի հեռանկարը՝ նա ցանկանում էր վորքան կարելի յե շուտ հաշտութուն կնքել:

Մոսկվան թողնելով՝ Կոստուզովը թշնամու աչքի առաջ դեպի Տարուտինո թևային փայլուն յերթ կատարեց, իր բանակով փակելով Նապոլեոնի ճանապարհը դեպի հարավային նահանգները, վորոնք հարուստ եյին պարենով, իսկ պարենի բացակայութիւնն այնքան տանջանքներ եր պատճառում Փրանսիական բանակին:

Իր զեկուցադրում Կոստուզովն այսպես եր հիմնավորում իր յերթի նպատակները.

«Տուլայի և Կալուզայի ճանապարհներից սկսած՝ իմ խմբերով պետք ե կտրեմ թշնամու ամբողջ դիծը, վոր ձգված ե Սմոլենսկից մինչև Մոսկվա, և դրանով իսկ խանդարելով ամեն մի աջակցութիւն, վոր թշնամու բանակը կարող ե ստանալ իր թիկունքից, և մեր վրա դրավելով թշնամու ուշադրութիւնը, հույս ունեմ նրան հարկադրել՝ թողնել Մոսկվան և փոխել իր ամբողջ ուղերացիոն դիծը...»: Այնուհետև Կոստուզովը մատնանշում եր, վոր քանի դեռ բանակը վողջ ե և մարտունակ, «Մոսկվայի վերադարձվելիք կորուստը դեռ հայրենիքի կորուստ չե»:

Կալուզայում կենտրոնացված եյին ուսական բանակի պարենի հսկայական պաշարներ, վորոնք ստացվում եյին պատերազմից չքայքայված հարավային նահանգներից, իսկ Տուլան և Բրյանսկն իրենց զինագործարաններով դենք եյին մատակարարում բանակին: Յեթե Նապոլեոնի բանակին հաջողվեր այնտեղ սողոսկել, պատերազմը կարող եր Ռուսաստանի համար չափազանց ծանր հետևանքներ ունենալ:

Ալեքսանդրը և նրան շրջապատողները չհասկացան

Կոստուզովի այս պլանը, վորով ել ավելի ուժեղացավ նրանց անբարեյացակամութիւնը դեպի Ֆելդմարշալը:

— Ձեմ հասկանում,— ասաց Ալեքսանդրը, Վոլկոնսկուն ուղարկելով բանակ,— ինչո՞ւ Ֆելդմարշալը դնաց դեպի Ռյազանի ճանապարհը, նա պետք ե դնար Կալուզայի ճանապարհով: Անմիջապես դնա նրա մոտ, իմացիր, թե ինչն ե նրան դողել այդ ուղղութիւնը վերցնելու և ինչ են նրա հետադա մտադրութիւնները:

Կոստուզովի թշնամիները ցարին ասում եյին, թե ուսական բանակի մանյովրն աննպատակ ու անվճռական թափառում ե:

Վորոշելով թևային յերթ կատարել՝ Կոստուզովն իր այդ զիտավորութիւնը չհայտնեց շտաբային գեներալներին. նա հավատացած եր, վոր դրանք չեն հասկանա իր զիտավորութիւնը և իրենց ինտրիգներով միայն կխանդարեն իրեն:

Ռյազանի ճանապարհով դնալը Կոստուզովը ծրագրել եր դեռ Յիլիում, իսկ այդ հուշակավոր թևային յերթը սկսվեց սեպտեմբերի 17-ի յերեկոյան, յերբ ուսական նահանջող բանակն անցել եր Մոսկվա գետը:

Դեռ Յիլիում հրավիրված խորհրդում, Բեննինդսենի, Դոխտուրովի, Յերմոլովի և մյուս գեներալների յեղոյթից հետո, վորոնք բողոքում եյին Ռյազանի ուղղութիւնը դնալու դեմ, Կոստուզովը նրանց հայտարարեց.

— Թշնամուն մոտիկ տարածութիւն վրա զորքերի տեղափոխութիւնները միշտ վտանգավոր են, և ռազմական պատմութիւնն ել հաստատում ե այդ նկատառումը:

Մոսկվան թողնելուց հետո Ռյազանի ճանապարհով դնալը բանակը պաշտպանեց վտանգավոր անակնկալներէց, քանի վոր բանակի աջ թևը պաշտպանված եր Մոսկվա գետով, և աջ ափը, ուր անցել եր բանակը, իշխում եր ձախ ափի վրա և հնարավորութիւն եր տալիս հակառակորդին պահել հրետանու կրակի տակ: Բացի դրանից, Մոսկվա գետը և Պախրան, վորոնք հոսում եյին ուսական բանակի դրաված բլուրների առջևից, այդ գերքը դարձնում եյին բնական ամրութիւն: Այսպիսով վը-



տանգավոր անահնկալներէից ապահովելով իր բանակը, վոր թվով դեռ պակաս եր թշնամու բանակից, Կուտուզովը կտրող եր համարձակ կերպով շարունակել իր յերթը Կալուզայի ճանապարհով և մինչև վերջ վստահորեն կատարել իր մտածած պլանը, — Մոսկվան դարձնել թակարդ Նապոլեոնի բանակի համար և նրան կտրել մատակարարման բաղաներից:

Կալուզայի ճանապարհով կատարվող յերթը պաշտպանվում եր հեծելազորային արյերդարողով, վորը նահանջում եր դիլավոր ուժերից հետո, բայց վոչ թե դեպի Կալուզա, այլ դեպի Ռյազան: Արյերդարդն իր վրա գրավեց Փրանսիական ավանգարդի ուշադրութունը, և այդ ավանգարդի հրամանատար Սերաստիանին կարծում եր, թե ինքը գործ ունի դեպի Ռյազան նահանջող ուսական դըլավոր ուժերի հետ...

Կուտուզովի խորամանկութունը հաջողվեց: Նա կարողացավ մի անգամ ել խաբել Նապոլեոնին:

Վորոչ ժամանակից հետո Սերաստիանին, համոզվելով, վոր ինքը կեղծ հետքերով ե գնում, Նապոլեոնին հազորդեց, թե ուսական բանակը չքացել ե: Այս դեկուցացիին ստանալով Նապոլեոնը Մյուրատին ուղարկեց ուսաներին հետապնդելու: Յերբ Կուտուզովն իմացավ Մյուրատի առաջարկման մասին, նրա դեմ ուղարկեց յերկու դիվիզիա, վորոնց ինդիւրն եր՝ թույլ չտալ, վոր Փրանսիացիները թեից անցնեն ուսական բանակի թիկունքը: Այս դիվիզիաների շարժումը Մյուրատին ևս մոլորության մեջ դրեց:

Կուտուզովը հասկանում եր, վոր ժամանակը նպատում ե իրեն: Բարեկամիկեց բանակի մատակարարումը, գալիս եյին ոժանդակ ուժեր. Տարուտինում գտնվելու վերջին որերում Կուտուզովն ուներ մոտ 97.000 հոգուց բաղկացած զորք, չհաշված առանձին ջոկատները: Մինչդեռ Փրանսիական բանակն այդ ժամանակ իր դեմ մղվող ժողովրդական պատերազմից և պարտիզանական զործողութուններից ամեն որ կորուստներ եր ունենում:

Նապոլեոնը, կորցնելով իր հավատը կամպանիայի

հաջողության նկատմամբ, շտապեց ոգտագործել Մոսկվայի դրավումը, վորպեսզի Ալեքսանդրին ստիպի հաշտութուն կնքել: Նապոլեոնը Մյուրատին հրամայեց գրել և ուսական ավանգարդի պետի միջոցով Կուտուզովին ուղարկել մի նամակ այն մասին, վոր Նապոլեոնը ցանկանում ե նրա մոտ ուղարկել իր դեներալ-ադյուտանտ Լորիստոնին:

Սպասելով մինչև յերեկո՝ Կուտուզովը համաձայնիկեց տեսնվել Լորիստոնի հետ և Լորիստոնի ժամանելուց առաջ ուսական զորքերը հրաման ստացան մեծ տարածութուն գրավել և մեծ քանակությամբ խարույկներ վառել: Յերբ Լորիստոնը ժամանեց ուսական բանակ, գնդերում մտով կաշա եյին յեհում, զինվորները յերգում եյին, յերաժըտութունը՝ նվազում:

Լորիստոնի և Կուտուզովի տեսակցութունը տեղի ունեցավ Տարուտինի ճամբարում: Բանակ ժամանելուց հետո Կուտուզովն առաջին անգամ չքաղդեստ հաղավ:

Լորիստոնը զրույցն սկսեց պատերազմ մղելու դաժան պայմաններից դանգատվելով:

— Դուք, քայքայելով ձեր սեփական յերկիրը, չեք հասնում ձեր նպատակին, վորովհետև Նապոլեոնի բանակն առատությամբ ունի այն ամենը, ինչ հարկավոր ե... Անհրաժեշտ ե պատերազմին տալ այնպիսի բնույթ, ինչպիսին այն ունի բոլոր լուսավորված ազգերի մոտ:

Կուտուզովը պատասխանեց.

— Յեթե նույնիսկ յես ցանկանայի փոխել ժողովրդի մեջ դոյութուն ունեցող մտածելակերպը, ապա հաջողության չեյի հասնի, վորովհետև ուսներն այս պատերազմը համարում են թաթարների յերկրորդ արշավանք...

Իր գալու իսկական նպատակի մասին Լորիստոնը սկսեց խոսել այսպես.

— Այն բարեկամութունը, վոր դոյութուն ուներ ձեր թաղավորի և Նապոլեոն կայսրի միջև, տարաբախտաբար քայքայվեց...

Լորիստոնն իր ճառն ավարտեց հաշտության առաջարկով:

Կուտուղովի համար շատ ծանր էր բանակը ղեկավարելը. նրան հասկանալ չէին ուզում: Շտաբում նա մենակ էր: Գլխավոր հրամանատարը յերբեմն ստիպված էր լինում գեներալիտետի ճնշման տակ ընդունել այնպիսի վորոշումներ, վորոնք դեմ էին նրա համոզմունքներին:

Այդպես էր Տարուտինի մոտ:

Բեննինդսենը պահանջում էր կովի բռնվել Մյուրատի հետ: Կուտուղովն առարկում էր: Վերջապես, այլևս չկարողանալով համբերել, ծերունի Ֆելդմարշալն ասաց Բեննինդսենին.

— Յես հրատարվում եմ բանակի հրամանատարությունից. յես միայն կամավոր եմ, դուք, վորպես ավագ, անցնում եք գլխավոր հրամանատարի պարտականությունների կատարման, ձեր տրամադրության տակ ե իմ շտաբը: Բարի յեղեք դիտել դիրքերը և ապա դործել ձեր պատասխանատվությամբ:

Բեննինդսենն ամբողջ շտաբի հետ դնաց հարմար դիրք ինտոնելու և չդատվ...:

Յերբ այդ մասին Կուտուղովին զեկուցեցին, նա ասաց.

— Այդ դեպքում յես նորից ստանձնում եմ հրամանատարությունը:

Յեվ դիմելով հերթապահ գեներալին, ավելացրեց.

— Գրեցեք դիսպոզիցիա նահանջելու համար:

Այնուամենայնիվ Տարուտինի մոտ կով տեղի ունեցավ: Հոկտեմբերի 18-ին ուստական զորքերը, ուժեղ հարվածներ հասցնելով Մյուրատին, Կուտուղովի հրամանով վերադարձան Տարուտինի դիրքերը:

Բեննինդսենը, վոր այդ կովում զորքերի հրամանատարն էր, պնդում էր, թե Կուտուղովը դիտավորյալ կերպով սարսափ է անում. Բեննինդսենն Ալեքսանդրին նամակ գրեց այդ մասին:

— Ո՞ւր ե այդ հիմարը, — մի անգամ հարցրեց Կուտուղովը:

Յեվ ձևացնելով, թե իբր չի կարողանում հիշել այդ գանուներ, ավելացրեց.

— Շիկամազը, վախկոտը:

Մեկը հարցրեց, թե արդյոք նա նկատի չունի՞ Բեննինդսենին:

— Այո՛, այո՛, այո՛:

Փելդյեգերը, վոր Պետերբուրգ էր տանում Կուտուղովի զեկուցագիրը Տարուտինի կովի մասին և Բեննինդսենին պարզեատրելու միջնորդությունը, տանում էր նաև Բեննինդսենի մատնությունը Կուտուղովի դեմ: Ռազմական խորհուրդը, ստանալով այդ մատնության վերաբերյալ գրությունը, այն ուղարկեց Կուտուղովին: Հետագա դեպքերի մասին Վոյեյկովն այսպես է պատմում.

«Կուտուղովն իր մոտ կանչեց Բեննինդսենին, հրամայեց (կապիտան Սկոբելևին) բարձրաձայն կարգալ իր միջնորդության վերաբերյալ զեկուցագիրը, վորի մեջ թագավորին շնորհավորելով պանծալի հաղթանակը, նա զբում էր, թե սույն եքսպեդիցիայի զորքերը հանձնարարել էր գախիններով պահված, փորձառությամբ և տնորինչությամբ հայտնի պատվարժան առաջնորդին, և վոր նա Կուտուղովի նախադեմը կատարեց քաջությամբ ու վարպետությամբ, վորով աչքի ընկավ: Ընթերցումը ավարտվեց: Կուտուղովը Բեննինդսենին հանձնեց մի սուր և հարյուր հազար ուրբի: Հետո հրամայեց կարգալ ստացված յերկրորդ թուղթը (Բեննինդսենի մատնությունը): Բեննինդսենը կանգնել էր կարծես կայծակնահար յեղած, մեկ գունատվում էր, մեկ կարմրում»:

Կուտուղովը Բեննինդսենին հեռացրեց բանակից: Նա այդ մասին իայթիչ տոնով հաղորդեց ցարին. — «Գեներալ Բեննինդսենի հիվանդ վիճակի և այլ զանազան հանդամանքների պատճառով յես նրան պատվիրեցի զնալ Կալուգա և սպասել ձերդ մեծության կողմից հետագա նշանակման, վորի մասին յերջանիկ եմ զեկուցելու»: Բայց ինտրիզները չթուլացան: Դրանք լարվում էին Ռոստոպչինի շտաբը դործուղվածների և անդլիական գեներալ Վիլսոնի կեղտոտ ձեռներով:

Ուստոպչինը փորձում էր արատավորել նաև բանակը: Նրա մատնություններն իրենց ազդեցությունն ունեցան և Ալեքսանդրը գինվորների յերդման մի առանձին ձև ուղարկեց Կուսուղովին—չգբաղվել կողոպուտներով: Կուսուղովը հրաժարվեց անցկացնել այդ յերդումը, չցանկանալով վերստին և ստորացնել գինվորներին:

Կուսուղովը գետեր լարվող ինտրիգները մասին և անձնատուր չեր լինում: Նա համառորեն պաշտպանում էր սլատերազմի իր սլանը, չթաղցնելով այն նույնիսկ իր հանձնատար իշխան Գոլիցինից: Վերջինիս հուշերի համաձայն այդ սլանը կայանում էր նրանում, վորպեսզի «ժամանակ չահել և վորքան հնարավոր է քնեցնել Նապոլեոնին... Այն ամենը, ինչ նպաստում էր սույն նպատակին, նրա համար ավելի գերադասելի յեր, քան դատարկ փառքը...»:



Բուրժուական պատմաբանները շատ են գրել 1812 թվականին աշխականների ցույաբերած հայրենասիրության, նրանց ստեղծած աշխարհազորի մասին: Այդ աշխարհազորը ստեղծված էր լինում հաճախ թղթի վրա, կամ զբաղվում էր նրանով, վոր կալվածատերերին պահպանում էր իրենց իսկ գյուղացիներից, վորոնցից նրանք ավելի շատ էին վախենում, քան Նապոլեոնից:

Իշխան Վոլոկոսկին իր հիշատակարանում պատմում է, թե ինչպես նա բանակից, գեներալ Վինցենզերոզի կողմից հանձնարարություն էր տարել Ալեքսանդր կայսրին: Վերջինս նրան տվեց հետևյալ հարցերը.

«1) Ինչպե՞ս է բանակի տրամադրությունը:— Յես նրան պատասխանեցի. «Թագավոր, գլխավոր հրամանատարից սկսած մինչև ամեն մի գինվորը, բոլորը պատրաստ են զոհել իրենց կյանքը հայրենիքի պաշտպանության համար...»:

2) Իսկ ժողովրդի տրամադրությունը:— Այդ մասին յես նրան պատասխանեցի. «Թագավոր, դուք պետք է

հպարտանաք նրանցով. յուրաքանչյուր գյուղացի հայրենիքին նվիրված հերոս է...»:

3) Իսկ ազնվականությունը:— «Թագավոր, — ասացի յես նրան, — ամաչում եմ, վոր պատկանում եմ նրան, — չատ ե խոսվել, բայց իրականում վոչինչ չի արվել»:

Նույնքան «հայրենասեր» էր նաև վաճառականությունը:

«Վաճառականները տեսնում էին, — պատմում է Բեստուֆե-Ռյուվինը, — վոր դատարկ ձեռներով չի կարելի հետ մղել թշնամուն, և անխղճորեն ողտվեցին այդ առիթից, վորպեսզի հարստություն դիզեն»: Յերբ անհրաժեշտ էր գինել աշխարհազորը, վաճառականները 5-8 անգամ բարձրացրին գենքի գինը:

Նապոլեոնի դեմ ժողովրդական պատերազմ էլին մղում ուս գյուղացիները:

Հարց է ծագում՝ հապա ի՞նչպես գյուղացիները, պաշտպանելով յերկիրը և այն հասարակակարգը, վորտեղ նրանք ստրուկներ էլին, — պաշտպանում էլին նաև ճորտատիրական իրավունքը, վորն այնքան ատելի յեր նրանց համար: Կառավարական մանիֆեստները և գյուղացիներին ուղղված կոչերը վոչ մի ազդեցություն չէին թողնում: Գյուղացիության մեջ ապրում էր այն հույսը, վոր թըշնամուն հայրենիքից դուրս քշելուց հետո, վերջապես, կադատվեն իրենց համար ատելի ճորտատիրական իրավունքից, կալվածատերերի տիրապետությունից: Գյուղացիները տեղ-տեղ, չսպասելով պատերազմի վերջանալուն, արդեն սկսեցին ջախջախել կալվածատերերին, իսկ Փրանսիացիների դրաված մարդերում կալվածատերերը հաճախ գլխում էլին Փրանսիական գեներալներին, խնդրելով իրենց պաշտպանել գյուղացիներից:

Թե ինչպես էլին դորձում գյուղացիները, այդ մասին պարզ պատկերացում է տալիս հետևյալ պատմությունը. «Շրջակա վայրի վրա իշխող բարձրագույն կետերում գյուղացիների կողմից նշանակված էլին պոստեր, վորոնք աչալուրջ հսկում էլին թշնամու յերևալուն. յեթե մոտեցող խումբը սակավաթիվ էր, ապա գյուղացի-գինվորներն

աշխատում եյին ծածուկ շրջապատել և դերի վերջնեյ նրան, վորպեսզի իրենց տեղն անհայտ մնա. իսկ յեթև զգալի ուժեր եյին հարձակվում, պահակներն այդ մասին լուր եյին տալիս ամենամոտ գյուղին. հնչում եր ահա-դանդը, և վաղորոք պայմանավորված տեղում հարևան բոլոր գյուղերից հավաքվում եյին մարդիկ, վորոնք զինվում եյին ով ինչով կարող եր...»:

Այդ ջոկատները գրադվում եյին թշնամու սիստեմատիկ բնաջնջումով, վոչնչացնում եյին նրա գումակները և ձիերին կեր հայթայթելն անհնար եյին դարձնում: Գյուղացիական ջոկատները հոճախ զինված եյին լինում յեղաններով ու կացիններով, բայց պայքարի ընթացքում նրանք զինվում եյին նաև թշնամուց զրափված հրացաններով:

Կուտուզովն իր պլաններում հաշիւ յեր առնում այդ կարևոր դործոնը—գյուղացիական ջոկատները, և մատների արանքով եր նայում կալվածատերերի դեմ ուղղված նրանց յելույթների վրա:

Գյուղացիական ջոկատները հաճախ դործում եյին պարտիզանների հետ միասին, վորոնց կազմակերպեց Կուտուզովը՝ Մոսկվան թողնելուց հետո: Պարտիզանական ջոկատները, անցնելով թշնամու թիկունքը, շատ փորձանքներ եյին պատճառում նրան: Պարտիզաններն աչալուրջ կերպով հետևում եյին Փրանսիացիների շարժումներին և այդ մասին անհապաղ հաղորդում եյին գլխավոր շտաբին:

\*\*\*

Հոկտեմբերի 23-ի դիշերը շտաբ-ոֆիցեր Բուլգովսկին ձիով ժամանեց Լետաշևկա, վորտեղ գտնվում եր Կուտուզովը:

Ֆելդմարշալը քնած եր: Նրան արթնացրին: Կուտուզովը Բուլգովսկուն ընդունեց անկողնի վրա նստած, բայց «սերթուկով և դեկորացիաներով: Նրա տեսքը վեհաշուք եր, և ուրախության զգացումն արդեն փայլում եր նրա աչքերում...»:

Կուտուզովը հասկանում եր, վոր դատարկ բանի համար իրեն չեն արթնացնի:

— Պատմի՛ր, բարեկամս,— ասաց նա Բուլգովսկուն,— այդ ի՞նչ դեպք ե, վորի մասին դու ինձ լուրեր ես բերել: Մի՞թե իսկապես Նապոլեոնը թողել ե Մոսկվան և նահանջում ե:

Բուլգովսկին սկսեց զեկուցել ընդունված ձևով:

Կուտուզովը նրան ընդհատեց.

— Շո՛ւտ ասա, հոգի մի հանիր:

Իմանալով թշնամու կողմից Մոսկվան թողնելու մամամանությունները, Կուտուզովը լաց յեղավ:

— Այս բոպեյից Ռուսաստանը փրկված ե:

Բանակի առաջավոր զորամասերին հրաման տրվեց նահանջող Փրանսիացիների հետևից շարժվել դեպի Մալոյարոսլավեց:

Կուտուզովը համոզված եր, վոր Նապոլեոնը կհեռանա Մոսկվայից և Ռուսաստանից, և այդ անխուսափելի կլինի այն չափով, ինչ չափով ուժեղ կլինի ուսսական բանակը, վորը չի վնասվել առանձին կռիվներում: Ալեքսանդրը, ամեն կերպ պայքարելով Կուտուզովի ստրատեգիայի դեմ, կշտամբանքներ եր թափում նրա վրա: «Հիշեցեք,— զրուժ եր նա Կուտուզովին,— վոր դուք Մոսկվան կորցնելու համար դեռ պետք ե պատասխան տաք վիրավորված հայրենիքին»:

Մոսկվայից դուրս գալուց առաջ Նապոլեոնն ասաց.

— Գնանք դեպի Կալուգա, և վա՛յ նրանց, ովքեր կհանդիպեն մեր ճանապարհին:

Նրա բանակը դեռ ահարկու ուժ եր ներկայացնում,— բաղկացած եր 107.000 հոգուց, այսինքն նա թվով ավելի յեր ուսսական բանակից:

Թողնելով Մոսկվան, Նապոլեոնը Յեվրոպային հայտարարեց.— «Կրեմլը, զինապահեստը, խանութները—ամեն ինչ վոչնչացված ե: Այդ հնադարյան միջնաբերդը, վոր դոյուլթյուն ունի միապետության սկզբից, ցարերի այդ հնադարյան պալատը, ինչպես և ամբողջ Մոսկվան, փրածված ե խիճի կույտերի, կեղտոտ, գարշելի կոյուղու,

վորը չունի վոչ քաղաքական, վոչ էլ ռազմական նշանակութուն»:

Նապոլեոնին չհաջողվեց ամբողջովին վոչնչացնել Մոսկվան, բայց հսկայական ավերածութիւններ եյին կատարված: Քաղաքը բոլորովին կողոպտված էր:

Տարորինակ տեսարան էր ներկայացնում նահանջող մեծ բանակը:

«Հսկայական դումակները, վորոնց լծված էյին վտխո, ուժասպառ ձիեր, — ասում է Միխայլովսկի-Գանիլևսկին, — և բազմաթիվ կառքերը, վորոնք բեռնված էյին արշավանքի ժամանակ անպետք պերճանքի առարկաներով, — ճանապարհվեցին բանակի հետ: Հեծելակները չափից դուրս բեռնում էյին իրենց խղճուկ ձիերը. հետևադորայիններն ուժասպառ էյին լինում ավարով լցված մաղախների ծանրության տակ: Փրանսիական բանակի յերթը ժողովուրդներն դաղթն էր հիշեցնում: Որվա ընթացքում անցնելիք ամբողջ տարածության վրա յերեք և չորս շարքերով ձգվում էյին՝ հրետանին, հիվանդանոցային և պարենի սայլերը, ամեն տեսակ կառքեր և նույնիսկ դրոժկաներ, վորոնք բեռնված էյին զանազան իրերով, գլխավորապես կենսամթերքներով և հազուստով, մինչդեռ վոչ մի միջոց չէր ձեռնարկված դրանք կանոնավոր կերպով գործերին մատակարարելու համար: Զորասյուներն էլ ավելի էյին յերկարում յեղջուրավոր անասունների մեծ նախիրներով: Բազմաթիվ ոտաբերկրացիներ, վորոնք բանակի հետ հեռացել էյին Մոսկվայից, ինչպես և նրանց ընտանիքները: կանայք ու յերեսանները հիվանդների ու վիրավորների հետ դնում էյին հրետանու և սայլերի միջև, իսկ ճանապարհի ծայրերին անկարգ խմբվում էյին զորքերը, կարծես հսկայական դումակին ուղեկցող պահակախմբեր լինեյին: Ամեն մի կամուրջի վրա, ամեն մի ձորակում թընդանոթները, սայլերն ու զորքերը խառնվում էյին իրար և կազմում խառնիճազանձ մի գանդված, կանգնեցնում իրեց հետևից յեկող զորամասերը:

Մալոյարոսլավեցի ճանապարհին Նապոլեոնը յենթադրում էր. Կուտուզովի հարձակման դեպքում գիրք բռնել

Մալոյարոսլավեցից մինչև Ֆոմինսկի, իսկ յեթե Կուտուզովը փակի Կալուզայի ճանապարհը, ապա գլխավոր ճակատամարտ տալ նրան: Ռուսական բանակը կովի պատրաստ կանգնել էր Մալոյարոսլավեցի մոտ: Շտաբային գեներալները Կուտուզովին համոզում էյին գրոհել Փրանսիացիներին վրա:

Կուտուզովը պատասխանեց.

— Այդ բոլորն առանց ինձ էլ կքայքայվի:

Տեղի ունեցավ մի փոքրիկ ճակատամարտ:

Կովի նախորդակին Նապոլեոնը տատանվում էր: Նա հարցրեց իր մարշալներին.

— Բանակի ներկա դրության տեսակետից վո՞րն է ավելի ձեռնտու, ճակատամարտ տալ, թե՞ խուսափել դրանից:

Մարշալները պատասխանեցին, վոր ավելի լավ է նահանջել:

Վաղուց չէր, վոր Նապոլեոնն ուզում էր կովի բռնվել Կուտուզովի հետ: Հիմա մարշալները նրան համոզում էյին, վոր անհրաժեշտ է խուսափել այդ կովից:

Նապոլեոնի բանակը նահանջում էր:

Կուտուզովի ստրատեգիան հաղթանակեց:

— Յես կարող էյի հպարտանալ նրանով, — ասաց Կուտուզովը, — վոր յես առաջին գեներալն եմ, վորի առաջ փախչում է դուռը Նապոլեոնը:

Կուտուզովի դեմ կատաղի պայքար էր մղում անգլիական գեներալ Վիլսոնը: Կուտուզովը չէր կարողանում ազատվել նրանից, ինչպես և Բեննինգսենից ու մյուսներից:

Կուտուզովը Վիլսոնին ասաց.

— Յես ամենևին չեմ կարծում, թե Նապոլեոնի և նրա զորքերի կատարյալ վոչնչացումն այնպիսի բարեգործութիւն լիներ աշխարհի համար: Նրա ժառանգութիւնը Ռուսաստանին չի մնա...

Անգլիան ամենից շատ էր շահադրդուված Փրանսիայի ջախջախումով: Պատերազմներից Փրանսիայի և Ռուսաստանի քայքայվելը նախադրյալ էր հանդիսանում Բրիտանական կայսրության մեծության համար: Կուտուզովը

վոչ միայն ստրատեգ եր, այլ և քաղաքադէտ: Այդ բոլորը հասկանում եր նա, ուստի և անտարբեր եր մնում այն խոսակցութիւններին, թէ պէտք է «աշխարհը փրկել Բոնապարտի լծից», և հանցադործութիւնն եր համարում սուսական արյուն թափել Լոնդոնի վաճառականների և Նապոլեոնի կողմից վերապորձված դերմանական ջնջին իշխանների շահերի համար:

Ալեքսանդրը, արքունիքը և Կուսուղովի շտաբը Ռուսաստանի շահերի դավաճաններն էին: Բայց նրանք չէին համարձակվում ձեռք բարձրացնել Կուսուղովի վրա. յերկիրը և բանակը նրան համարում էին «տասնեկուս լեզուները» արշավանքից փրկող: Ալեքսանդրը գիտեր գյուղում դանձուղ և զինվորի շինելներ հաղած գյուղացիների տրամադրութիւնը և վախենում եր զրգոել այդ ուժը...

Սարսափելի յեր «մեծ բանակի» նահանջի ճանապարհը: Այն նշվում եր հրդեհների ցուրերով և ծածկված եր մարդկանց ու ձիերի դիակներով: Միլորազովիչը և Պլատովը հետապնդում էին Փրանսիական արշակաբարդին և վոչ մի բուպե հանդիստ չէին թողնում նրան: Պարսիկաները և գյուղացիական ջոկատները վոչնչացնում էին Նապոլեոնի բանակի առանձին ջոկատները և դժվարացնում նրա նահանջի ճանապարհը: Սովը հնձում եր Փրանսիական բանակի շարքերը: «Սովը,— գրում եր Վոյեկովը բանաստեղծ Դերթավինին,— նրանց ստիպեց ուտել վոչ միայն ընկնող ձիերի միսը, այլ և շատերը տեսնում էին, թէ ինչպէս նրանք ուտելու համար տապալում էին իրենց մեռած հայրենակցի մարդկային միսը»:

Բերեզինայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը վերջին և ջախջախիչ հարվածն եր մեծ բանակին: Հետագա ճանապարհը մինչև Կովնո Նապոլեոնի բանակի վերջն եր վոչ միայն ռազմական, այլ և Փիզիկական տեսակետից:

Ծանր եր նաև ռուսական բանակի դրութիւնը: Ռուսները գնում էին ամբարձր վայրերով, իսկ գումակները միշտ անհուսալիորեն հետ էին մնում: Մարտարարութեանց գուրս յեկած զորքերի միայն մի յերրորդը հասավ Վիլնա:

«Մեծ բանակը» վոչնչացվեց: Նապոլեոնը փախավ Փարիզ:

Կուսուղովը պատերազմը համարում եր ավարտված: Վիլնո ժամանեց Ալեքսանդրը: Սկսվեց գարշելի մի կոմեդիա—Կուսուղովի մեծարումն ու պարզեատրումը: Այդ ցերեմոնիայից հետո Ալեքսանդրն իր մոտ կանչեց Վիլոնին և շնորհակալութիւն հայտնելով նրա նամակների (Կուսուղովի դեմ ուղղված մատնութիւնների) համար, սասց.

— Յես դիտեմ, վոր Ֆելդմարշալը չի արել այն, ինչ վոր պէտք է աներ... նրա բոլոր հաջողութիւնները փաթաթել էին նրա վզին:

Ալեքսանդրը վորոշեց շարունակել ռուսական բանակի արշավանքը դեպի Փարիզ:

Կուսուղովը հակառակում եր:

«Շատ գեներալներ, — գրում է իր հիշատակարանում Չերնիշևը,— համաձայն էին Կուսուղովի հետ՝ դուրս չգալ Ռուսաստանի սահմաններից, բայց կայսրը հրամայեց անհապաղ շարժման մեջ դնել բանակը, և շնայելով զորքերի ուժասպառ լինելուն ու ձմեռվան, դնայ դեպի առաջ»:

Ալեքսանդրն ինչ գործ ուներ Ռուսաստանի հետ: Նա ուզում եր աշխարհին ստիպել «իրեն այլևս հիմար չհամարել»: Յակուչիկինն իր հիշատակարանում պատմում է.— «Բոլորի ականջներին անդադար հասնում էին կայսեր խոսքերը, վորոնցով արտահայտվում եր բացահայտ արհամարհանք դեպի ռուսները»:

Յերբ Ալեքսանդրը ժամանեց բանակ, Կուսուղովը փաստորեն այլևս գլխավոր հրամանատար չեր:

Ռուսական բանակն անցավ սահմանը:

Գայնաուից Բուենյաու գնալիս, դեռ քաղաքին չհասած, Կուսուղովը դուրս յեկավ կառեթից և ձի նստեց: Գարնանային ցուրտ որ եր: Ծերունի զորավարը ձիու վրա մրսեց ու կրկին կառեթ նստեց:

Հասնելով Բուենյաու, Կուսուղովը պառկեց: Ակներև

եր, վոր զառամած զորավարն արդեն անցել է իր մարտական ուղին:

Կուսուղղովը մեռավ 1813 թվի ապրիլի 28-ին:


\*\*\*

Անցել է 125 տարի այն ժամանակներից, յերբ մեռավ Կուսուղղովը: Խորհրդային ժողովուրդը յերբեք չի մոռանա Կուսուղղովի, այդ մեծ զորավարի, ոուս ժողովրդի հավատարիմ զավակի անունը և նրա առաջնորդած ոուս հիանալի զինվորների մարտական պանծալի տրադիցիաները: Կուսուղղովի և 1812 թվի պատերազմի հերոսները սխրագործությունները մեզ կանչում են դեպի մարտ, դեպի պայքար բոլոր թշնամիների դեմ, վորոնք փորձում են վտանձաբերութուն անել խորհրդային սրբազան հողի՝ մեր յերկրի ազատության և անկախության դեմ:

Թարգմ. Հ. Մազմանյան  
Գատ. խմբագիր՝ Վ. Պոզոսյան  
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան  
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շաիրազյան

Գլավլիտի լիազոր՝ Վ.—2074, Հրատ. № 4839  
Պատվեր 236. Տիրաժ 5000  
Հանձնված է արտադրության 7 մարտի, 1939 թ.  
Ստորագրված է տպագրության համար 16 մարտի, 1939 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0219712



167

40.570

ԳԻՆԸ 1 Ռ.  
ԿԱԶՄԸ 50 Կ.

С. БОРИСОВ  
**КУТУЗОВ**  
Очерк жизни и деятельности  
великого русского полководца.  
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.

С